

ԵՐԵՎԱՆԻ ԸՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԸԱՄԱԼՍԱՐԱՆ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ
ԸԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸԱՅԱՍՏԱՆԻ
ԸԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ
13-14 հունիսի 2014թ.**

Երևան
Հյուսիսային համալսարանի հրատարակչություն
2014

ЕРЕВАНСКИЙ СЕВЕРНЫЙ УНИВЕРСИТЕТ

МАТЕРИАЛЫ

*международной научной
конференции*

**«Современные проблемы
развития экономики
Республики Армения»**

13-14 июнь 2014 г.

**Ереван
Издательство Северного университета
2014**

NORTHERN UNIVERSITY OF YEREVAN

Contemporary Issues of Economic Development in the Republic of Armenia

**Materials of International
Scientific Conference**

13-14 June, 2014

YEREVAN
Northern University Publishing House
2014

ՀՏԴ 377
ԳՄԴ 74.5
Մ 315

Հրատարակվում է Հյուսիսային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Մ 315 Տնտեսության զարգացման արդի հիմնախնդիրները Հայաս-
տանի Հանրապետությունում: Գիտաժողովի նյութեր: /13-14
հունիսի, 2014թ./. Երևանի Հյուսիսային համալսարան,- Եր.:
Հյուսիսային համալսարան, 2014. - 140 էջ:

*Ժողովածուն պարունակում է Հյուսիսային համալսարանի ռեկ-
տորատի նախաձեռնությամբ՝ 2014 թվականի հունիսի 13-14-ին
անցկացված գիտաժողովի մասնակիցների զեկուցումները, որոնք
առնչվում են Հայաստանի Հանրապետության տնտեսության զար-
գացման տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրներին և դրանց
լուծման ուղիներին:*

*Ժողովածուն նախատեսվում է տնտեսագետների, ինչպես նաև
ընթերցողների լայն շրջանների համար:*

ՀՏԴ 377
ԳՄԴ 74.5

ISBN 978-99941-866-6-2

© Հյուսիսային համալսարան 2014 թ.

Խմբագրական-հրատարակչական խորհուրդ

Մակիճյան Բ.Մ. (խորհրդի նախագահ, մանկ. գիտ. թեկ.), Ասատրյան Գ.Ե. (խորհրդի նախագահի տեղակալ, փիլ. գիտ. թեկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. դոկ.), Ճուղուրյան Ա.Գ. (տնտ. գիտ. դոկ.), Հակոբյան Ա.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Մարգարյան Հ.Ա. (տնտ. գիտ. դոկ.), Մակիճյան Մհեր Բ. (տնտ. գիտ. թեկ.), Խաչատրյան Ն.Ն (տնտ. գիտ. թեկ.), Ավետիսյան Ս.Ս. (տնտ. գիտ. թեկ.):

Редакционная коллегия

Макичан Б.М. (председатель редакционного совета, канд. пед. наук), Асатрян Г.Е. (зам. председателя, канд. фил. наук), Аветисян С.С. (доктор экон. наук), Джугурян А.Г. (доктор экон. наук.), Акопян А.А. (доктор экон. наук.), Марзпаян А.А. (доктор экон. наук), Макичан М.Б. (канд. экон. наук), Хачатрян Н.Н. (канд. экон. наук), Аветисян М.С. (канд. экон. наук)

Editorial Collegium

Makichyan B.M. (head of editorial comity. PhD in ped.), Asatryan G.E. (PhD in philos.), Avetisyan S.S. (doctor of econ. science), Tshuguryan A.G. (doctor of econ. science), Hakobyan A.A. (doctor of econ. science), Marzpanyan A.A. (doctor of econ. science), Makichyan M.B. (Phd in econ.), Khachatryan N.N. (Phd in econ.), Avetisyan M.S (Phd in econ.).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացման խոսք	10
Անդրեասյան Հ.Հ. Ռիսկերի կառավարման կատարելագործման ուղիները լիզինգային գործարքներում	12
Կոստանդյան Ն.Գ. Տնային տնտեսությունները շուկայական հարաբերություններում	19
Ավետիսյան Ս.Ս. Ավետիսյան Ա.Ս. Հունանյան Լ.Ս. Պետական աջակցությամբ գյուղատնտեսական ապահովագրության միջազգային փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում	28
Ռիշմա Ռ.Վ. Ճուղության Ա.Գ. Սրապյան Ն.Ն. Տնտեսագիտական կրթության ժամանակակից հիմնախնդիրները. ասպիրանտուրայում	44
Խաչատրյան Ն.Ն. Աբեսաձե Ն.Ս. Շարունակական կրթության սոցիալ-տնտեսական շարժառիթները	45
Խալաթյան Հ.Ա. ՀՀ տնտեսության նորագույն ճյուղերի ձևավորման ու զարգացման աշխարհագրական նախադրյալները	50
Մարգարյան Է.Հ. Ինչպես համադրել Հայաստանում և Վրաստանում գների մակարդակները	57
Պողոսյան Մ. Ռ. Մարդկային կապիտալի մեկնաբանումների շուրջ	66

Փահլևանյան Վ.Ս.	Ֆինանսական վերլուծության բարելավման ուղիները 74
Հակոբյան Ս.Գ.	Տնտեսության հանրային հատվածի ֆինանսական գործառնությունները 80
Ավետիսյան Մ.Ս.	Միջազգային համադրումների նախնական գնահատականները 87
Այվազյան Ա.Ա. Սահակյան Ա.Ա.	Հարկային և ֆինանսական հաշվառման ներդաշնակեցման հիմնախնդիրները 93
Մուհամեդ Ռ.Ս.	Տնտեսական աճի և կրթության փոխներգործությունը 110
Բալասյան Ս. Հ. Սմբատյան Շ. Ա.	Պրոցիկլայնության կանխարգելման հիմնախնդիրները բանկային համակարգում 116
Այվազյան Ա.Ա. Կարապետյան Գ.Ե.	ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխում- ների զարգացման միտումները և միջազգային փորձը 118
Բալայան Բ.Տ.	Լիզինգային գործարքների հաշվառման ներդաշնակեցման հարցեր 132
Գրիգորյան Ա.Ա. Հանիսյան Հ.Հ.	Մաքսային միությունը որպես տնտեսա- կան ինտեգրման փուլ. հիմնախնդիրներ և հեռանկարներ..... 137

TABLE OF CONTENTS

Andreasyan H.H.	RISK MANAGEMENT DEVELOPMENT WAYS IN LEASING OPERATIONS.....	18
Kostandyan N.G.	HOUSEHOLDER ENTITES IN MARKET ECONOMY RELATIONS	27
Avetisyan S.S. Avetisyan A.S. Hunanyan L.S.	INTERNATIONAL EXPERIENCE OPPORTUNITIES OF APPLYING AGRO INSURANCE WITH STATE SUPPORT IN ARMENIA.....	38
Rishma R.V. Tshuguryan A.G. Srabyan N.N.	CONTEMPORARY ISSUES OF ECONOMICS POST GRADUATE STUDIES.....	39
Khachatryan N.N. Abesadze N.S.	SOCIAL ECONOMIC MOTIVATIONS OF LONG LIFE LEARNING	50
Khalatyan H.A.	THE GEOGRAPHICAL PREREQUISITES OF FORMATION AND DEVELOPMENT OF THE NEWEST SECTORS OF ECONOMY IN RA	56
Marzpanyan Ed. H.	HOW TO COMPARE PRICE LEVELS OF ARMENIA AND GEORGIA	65
Poghosyan M. R.	ABOUT INTERPRITATIONS OF HUMAN CAPITAL	73
Pahlevanyan S.V.	THE DEVEELOPMENT WAYS OF FINANCIAL ANALYZING.....	79
Hakobyan S.G.	FINANCIAL FUNCYIONS OF PUBLIC SECTOR ECONOMY	86

Avetisyan M. S.	ABOUT PRELIMINARY ESTIMATES OF THE INTERNATIONAL COMPARISONS.....	92
Ayvazyan A.S. Sahakyan A.A.	THE HARMONIZATION ISSUES OF TAXATION AND FINANCIAL ACCOUNTING.....	100
Meymandi M.R. S.	ECONOMIC DEVELOPMENT AND EDUCATION CORRELATION INTERPRETATION	101
Smbatyan Sh. A. Balasyan S. H.	PRO-CYCLICALITY PREVENTION ISSUES IN BANKING SECTOR.....	111
Ayvazyan A.S. Karapetyan G.E	DEVELOPMENT TRENDS OF PENISON REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA AND INTERNATIONAL EXPERIENCE	126
Balayan B.T.	HARMONIZATION OF LEASING ACCOUNTING PARCTICE.....	131
Grigoryan A.A. Hanisyan H.H.	CUSTOMS UNION AS AN ECONOMICS INTEGRATION STAGE: ISSUES AND PERSPECTIVES.....	137

Բացման խոսք

Հարգելի գործընկերներ:

Հյուսիսային համալսարանը ողջունում է իր տանիքի տակ հավաքված գիտաժողովի մասնակիցներին, որոնք քննարկման թիրախ են դարձնելու Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման առկա հիմնախնդիրների լուծումները Մեզ համար արդեն ավանդույթ է դարձել յուրաքանչյուր տարի Բարձր մակարդակով մասնագիտական քննարկումներ անցակացնել հանրությանը հուզող մի շարք հարցերի շուրջ, ինչպիսին են մասնագիտական կրթության որակը, համալսարանական ակադեմիական ազատությունները, թումանյանագիտության բացահայտումները և այլն:

Այնուհանդերձ, այս գիտաժողովը առանձնանում է նրանով, որ քննարկումներ են ծավալվում Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման հիմնախնդիրների շուրջ և հարցադրումները հիմնականում ֆոկուսացվում են հենց դրանց լուծումների ուղղությամբ:

Մեր անկախ հանրապետության տնտեսական զարգացման հետագիծը ցույց տվեց, որ կարողացանք հաջողությամբ հաղթահարել անցումային տնտեսության արգելքները և հաստատական գնում ենք կայուն տնտեսավարման ճանապարհով: Անգամ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որը ցնցեց հզոր տնտեսությամբ երկրների բանկային համակարգը, խոշոր հարված հասցրեց արևմտյան պետությունների տնտեսական վերելքին, փաստո-

րեն համեմատաբար առավել մեղմ հետևանքներով դրսևորվեց Հայաստանի Հանրապետությունում: Ճգնաժամի ալիքը հասավ նաև մեզ, բայց կարողացանք այնուհանդերձ պահպանել կայուն բանկային համակարգ, կառավարվող գնաճ, վճարահաշվարկային գործառույթներ և ի վերջո, գլոբալ իմաստով, հաղթահարեցինք մի շարք տնտեսական սպառնալիքներ, որոնցից չկարողացան խուսափել շատ ու շատ երկրներ: Այս փաստը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ մենք զարգացման ճիշտ ուղու վրա ենք և կերտում ենք կայուն տնտեսական համակարգ:

Մակայն, դրա հետ մեկտեղ տեղին է նաև նշել, որ տնտեսական ոլորտում անելիքները դեռևս շատ են: Աշխատունակ բնակչության շրջանում էական տեսակարար կշիռ է կազմում գործազրկությունը, երկրում բարձր է նաև աղքատության մակարդակը, չեն նվազում սոցիալ-տնտեսական դրդապատճառներով արտագաղթի տեմպերը, մեր հանրապետությանը չի հաջողվում մրցակցային դիրքեր գրավել միջազգային շուկաներում՝ արտահանվող արտադրատեսակների գծով: Ավելին, դեռևս թույլ է գիտության և արտադրության կապը, որը խոչընդոտում է գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը: Իսկ այսօր, մրցակցային են համարվում այն երկրները, որոնք ոչ թե հարուստ հումքահանքային պաշարներ ունեն, այլ ձևավորում են մարդկային հզոր կապիտալ և այդ ներուժը օգտագործում՝ ի նպաստ տնտեսության զարգացման:

Գիտաժողովի ծրագիրը և նրանում ընդգրկված զեկույցները վկայում են այն մասին, որ քննարկման թիրախ են դառնալու վերը նշված հիմնախնդիրները, որոնց լուծման ուղիների առաջադրումները անշուշտ մեծ հետաքրքրություն կառաջացնեն տնտեսագետ հետազոտողների և գործարարների շրջանում և իրենց ազդեցությունը կունենան մեր հանրապետության տնտեսական վերելքի աջակցման գիտագործնական ընթացքին:

Հաջողություն եմ մաղթում գիտաժողովի մասնակիցներին, ակնկալելով արդյունավետ քննարկումներ և աշխատանքային բեղմնավոր արդյունքներ:

Հյուսիսային համալսարանի
ոնկտոր՝ *Բ.Մ. Մակիցյան*

Անդրեասյան Հ.Հ.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
ասպիրանտ
andreasyan44@yandex.ru

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. ֆինանսական ռիսկեր, ֆինանսական վարձակալություն, ռիսկերի կառավարում, Բազելյան սկզբունքներ

Լիզինգային գործարքների ֆինանսական ռիսկերի գնահատման տեսամեթոդաբանական վերլուծությունների և կիրառական հիմնախնդիրների ուսումնասիրությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ լիզինգային գործարքների էվոյուցիան և ներկայիս դրսևորման առանձնահատկությունները նոր խնդիրներ են առաջացնում ֆինանսական վարձակալության ռիսկերի կառավարման ոլորտում, ինչպիսիք են.

Առաջին, լիզինգի կազմակերպման տարաբնույթ և բազմաֆունկցիոնալ մեխանիզմների միաժամանակյա գործածումը ֆինանսական շուկայում, որը ենթադրում է յուրաքանչյուր վարձակալության պայմանագրին ռիսկերի կառավարման առանձնահատուկ մոտեցման ցուցաբերում՝ ելնելով վարձակալման սխեմայի պայմանագրային յուրահատուկ պայմաններից և լիզինգի ձևից:

Երկրորդ, անցումը ուղղակի մասնակիցներով լիզինգի կազմակերպումից անուղղակի սուբյեկտներով վարձակալության, որով անհրաժեշտություն է ծագում կառավարելու ոչ միայն պայմանագրի անմիջական մասնակիցների գործունեությունը, այլև մշտադիտարկելու միջնորդավորող օղակների ֆինանսական գործունեությունը, որպեսզի վերջիններիս գործունեության խաթարումը չանդրադառնա բուն վարձակալության կողմերի ներդաշնակ փոխհարաբերությունների ձախողման վրա:

Երրորդ, կորպորատիվ կառավարման հիմունքներով լայնամուտաբ և խոշորածավալ լիզինգային ծրագրերի կազմակերպումը, երբ վարձակալության գործունեությունից ձևավորվող ֆինանսական արդյունքներով հաշվետու են լինում բաժնետերերի լայն շրջանա-

կին, դրանով իսկ առավել խստապահանջ լինելով ռիսկերի կառավարման գործընթացին:

Չորրորդ, ֆինանսական շուկայում լիզինգային կազմակերպությունների մրցունակության ապահովումը, երբ վարձակալական ծառայությունների մատուցման որակի և մրցունակ գնի սահմանումը ուղեկցվում են երկարաժամկետ ֆինանսական ներդրումային ռիսկերի արդյունավետ կառավարմամբ:

ՀՀ-ում ֆինանսական վարձակալության խթանման լրացուցիչ տնտեսախրավական միջոցներ կարող են հանդիսանալ.

- «Լիզինգի մասին» ՀՀ օրենքի ընդունումը, այն միաժամանակ հարմոնիզացնելով ֆինանսական վարձակալությանը առնչվող ՀՀ-ում գործող տնտեսախրավական ակտերի պահանջներին, որով նոր երաշխիքներ կձևավորվեն ֆինանսական վարձակալության օրենսդրական նորմերի կարգավորման ոլորտում,¹

- վարձակալության մոտիվացիոն գործառույթների ակտիվացումը, մասնավորապես բարելավելով վարձակալի կողմից ակտիվի գնման, վարձավճարների փոխանցման, լիզինգի օբյեկտի տնօրինման. շահագործման և մոդեռնացման գործառույթները, կիրառելով նաև արագացված ամորտիզացիա՝ նպաստավոր բիզնես միջավայր ստեղծելով լիզինգային գործարքների համար,

- վարձակալության ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի մասնակիցների միջև ռիսկային կորուստների վերաբաշխման իրականացումը այնպես, որ լիզինգի ձախողումից կորուստների փոխհատուցման ընդհանուր պատասխանատվության դաշտ ստեղծվի և դրանով իսկ՝ վարձակալի կողմից ռիսկային կորուստների փոխհատուցման պատասխանատվության բեռի որոշակի բաժնեմաս փոխանցվի լիզինգի մյուս մասնակիցներին:

Ռիսկերի կառավարման գործառույթները, ի տարբերություն համընդհանուր բիզնես միջավայրի, ֆինանսական վարձակալական հարաբերություններում ընդունում են առավել լայն շրջանակ:

Նախ, այստեղ որոշիչ դերակատարում ունեն դրամական ներհոսքերի և արտահոսքերի մշտադիտարկումները վարձակալության

¹ Балаян Б.Т. Армения: Рынок лизинговых услуг // Вестник Санкт-Петербургского Государственного Университета. Серия 13. – 2012, стр. 138-145

պայմանագրի ողջ ընթացքում, որով ոչ միայն հնարավորինս կառավարվում է լիզինգառուի ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը, այլև՝ երկարաժամկետ կտրվածքով ֆինանսական շուկայում ձևավորվող վնասաբեր սպառնալիքներից շրջանցման, կամ առնվազն մեղման ուղիները:

Բացի այդ լիզինգային գործարքների ռիսկերի կառավարումը, որպես կանոն, իրականացվում է կորպորատիվ սկզբունքով, հնարավոր վնասների փոխհատուցման բաժնեմասերը բաշխելով պայմանագրի կողմերի վրա, ընդ որում, այստեղ ընդգրկելով ոչ միայն գործարքի մասնակիցներին, այլև աուտսոբսինգի սուբյեկտներին:

Ի վերջո, լիզինգային գործարքների ռիսկերի կառավարման արդյունքների վերահսկողությունը ընդգրկվում է ոչ միայն վարկային կազմակերպությունների ներկառավարչական գործառույթների շրջանակում, այլև իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային գործակիցներով և վարկարժանության գնահատման գործիքակազմով ու ենթաօրենսդրական ակտերով: Ֆինանսական վարձակալության մեկնարկի պահի և ակընկալվող արդյունքների ստացման ժամկետների միջև երկարատև ժամանակահատվածի առկայությունը նախատեսում է ըստ ձևավորման ժամանակաընթացքի ակնկալվող ներդրումների արդյունքների վերագնահատման և դրանով իսկ՝ պայմանագրային դրույթների պարբերաբար վերանայման ռիսկերի կառավարում:

Բազել III համաձայնագիրը ֆինանսական միջավայրի կայունությանն ուղղված մի շարք նորամուծություններ է առաջարկում, որը պետք է որոշակիորեն արտացոլվի լիզինգային գործարքների ռիսկերի կառավարման հայեցակարգում: Դրանցից է ռիսկերից հնարավոր վնասների փոխհատուցման ֆինանսական պաշարների ստեղծման օրենսդրական կարգավորումը, ներմուծելով բուֆերային կապիտալի ձևավորման և դրա հաշվին հնարավոր հետագա կորուստների փոխհատուցման գաղափարը:²

Բացի այդ, կարևորվում է ռիսկերի կառավարման մակարդակների առաջնահերթությունների հիերարխիայի ստեղծումը, երբ

² Гидулян А., Организационная структура риск менеджмента, Управление финансовыми рисками, 2009, #3 (19), стр. 170-179

հնարավոր կորուստների փոխհատուցման գործընթացին միանշանակ մոտեցում չի ցուցաբերվում, այլ տրվում են ռիսկային վնասների մեղման փուլային լուծումներ: Եվ վերջապես, առաջնահերթ է համարվում ռիսկերի կառավարման գործիքակազմի կանոնակարգումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ կտրվածքով, երբ սահմանված կապիտալի բավարարության և լեվերեջի ցուցանիշները ժամանակագրական կտրվածքով կարգավորում են տեղաբաշխված միջոցներին առնչվող ռիսկային գործոններին հակազդման պահուստների ստեղծումը՝ ֆինանսական կառույցների սեփական միջոցների հաշվին:

Որպես կանոն, բանկային գործունեության ռիսկերի գնահատման կանոնակարգային ոլորտում ինտեգրացված մոտեցում է ցուցաբերվում, երբ համախմբվում են ռիսկային գործոնների ազդեցության չափերը: Մեր կարծիքով, նմանատիպ մոտեցում պետք է ցուցաբերվի լիզինգային գործարքների ռիսկերի գնահատման ոլորտում, սակայն հաշվի առնելով մի շարք առանձնահատկություններ:

Առաջին, լիզինգային գործարքների մասով կապիտալի համարժեքության նորմատիվը նպատակահարմար է հաշվի չառնել, վարձատրման դեբիտորական պարտքերի ռիսկերի կշիռները սահմանելով 0%, որով վարկային կազմակերպություններին հնարավորություն կտրվի մեղմելու ֆինանսական վարձակալության գծով սահմանափակումները և ակտիվացնելու լիզինգը:

Երկրորդ, լիզինգի ակտիվացմանը զուգընթաց, հնարավոր ռիսկային կորուստների փոխհատուցման նպատակով, եկամուտների հավելաճի հաշվին վարձակալության գործարքների մասով վարկային կազմակերպություններում լրացուցիչ մեծացնել կապիտալի պահուստավորման մասնաբաժինը, որը համահունչ է Բազելյան գործընթացին:

Երրորդ, լիզինգի վարկավորման նորմատիվային բեռի թեթևացումը, որը արդարացվում է վարձակալության պայմանագրի կողմերի միջև ֆինանսական ռիսկերի վերաբաշխումով, անհրաժեշտ է զուգորդել “ակնթարթային” իրացվելիության ռիսկի գնահատման մեթոդաբանության կիրառմամբ, դրանով հակակշիռ ստեղծելով լիզինգի գծով դեբիտորական պարտքերի և վարկային կազմակերպության վճարունակության միջև՝ մեղմելով վարձատրման ֆինանսական ռիսկերը:

Լիզինգային գործարքներում առաջարկվում է իրացվելիության գնահատմանը ցուցաբերել ոչ միայն ստատիկ մոտեցում, կիրառելով ֆինանսական գործակիցներ, այլև դինամիկ գործընթաց, շարունակաբար գնահատելով վարձակալական պայմանագրերի կատարման ֆինանսական կայունության պաշարը, որը կլրացնի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրացվելիության նորմատիվները:

Մյուս կողմից, անհրաժեշտ է հաշվի առնել նաև իրացվելիության վատթարացման արտաքին գործոնները, որոնք առնչվում են վարկային կազմակերպությունների գործունեությանը և ձևավորում են լիզինգային գործարքների ֆինանսական ռիսկեր, ինչպիսիք են լիզինգային պորտֆելում մեկ ճյուղին առնչվող գործարքների համակենտրոնացման բարձր աստիճանը, միջբանկային վարկավորման ճգնաժամը, վարձակալի ֆինանսական կայունության վատթարացումը, լիզինգային գործարքների կարճաժամկետ և երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրների դիսբալանսը: Սակայն, բոլոր դեպքերում, իրացվելիության ֆինանսական ռիսկերի թե արտաքին, և թե ներքին գործոնների ազդեցությունը ամփոփվում է լիզինգային գործարքների դրամական հոսքերում, որը առաջարկում են չափել ֆինանսական կայունության պաշարների գնահատման ճանապարհով:

Վարձակալական հարաբերություններում ձևավորվող ապահովագրական վճարների մեծությունը անհրաժեշտ է ձևավորել ոչ միայն վարձակալի մոտ, ֆորս մաժորային իրադարձությունների, բիզնես պլանի խափանումից ռիսկերի ապահովագրական որոշակի բաժնեմաս փոխանցելով վարձատուին և վարձակալության տրվող ակտիվի արտադրողին (մատակարարին):³ ՀՀ-ում վարձակալության կարևորագույն կողմ հանդիսացող ակտիվի մատակարարը ընդհանրապես չի կրում լիզինգի ապահովագրության բեռ և ֆորս-մաժորային իրավիճակներում ռիսկային կորուստների պատասխանատվության երաշխավոր չէ: Ուստի, անհրաժեշտ է վարձակալության մասնակիցների միջև ապահովագրական բեռի վերաբաշխում այնպես, որ լիզինգի ձախողումից կորուստների փոխհատուցման ընդհանուր պատասխանատվության դաշտ ստեղծվի «ակտիվի մա-

³ Бутенина Н.В., *Лизинг в Великобритании, Лизинг ревю*, 2000, #3/4, стр.26-32

տակարար-վարձակալ-վարձատու-բանկ» շղթայում, և դրանով իսկ՝ վարձակալի կողմից ռիսկային կորուստների փոխհատուցման պատասխանատվության բեռի բաժնեմաս փոխանցվի լիզինգի մյուս մասնակիցներին: Բացի այդ, վարձատուն հնարավորություն կստանա բարեփոխված ապահովագրական պոլիսներով ստեղծելու լիզինգի ապահովագրման լիարժեք ծածկույթ, քանի որ ապահովագրավճարների բեռը հիմնականում չի ձևավորվի վարձակալի մոտ և երաշխիքների սահմանման առումով լիզինգը երկուստեք կդառնա շահավետ:

Լիզինգը գործառնությունները լինելով ռիսկային և երկարաժամկետ, իրենց կարգավորումը պետք է ստանան նաև հեջավորման հարաբերություններում:⁴ Հեջավորման փոխհարաբերությունները վարձակալության ոլորտում ձևավորվում են ակտիվի իրական արժեքի ճանաչման և ապագա դրամական հոսքերի գնահատման պարագայում: Լիզինգային պարտավորությունների հեջավորումը հնարավորություն է ընձեռնում վարձատուին և վարձակալին ապահովագրելու ակտիվի վերագնահատման ռիսկային տատանումներից, իսկ հեջի հաշվառման կազմակերպումը ֆինանսական հաշվետվությունների օգտագործողներին տեղեկատվություն է տրամադրում ֆյուչերսային գործարքների արդյունավետության մասին, որն էլ իր հերթին կանխարգելում է ֆինանսական ռիսկերով պայմանավորված վնասների ձևավորումը:⁵

Ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգում կարեվորվում է հաշվետվական տեղեկատվության ապահովումը, որը հիմք է հանդիսանում լիզինգային գործարքների գծով արդյունավետ կառավարչական որոշումների կայացման համար: Այս առումով, նպատակահարմար է համարում վարկային կազմակերպություններում ՀՀ Կենտրոնական բանկին ներկայացվող կանոնակարգային հաշվետվություններին զուգընթաց՝ ներդնել ռիսկերի ներկառավարչական հաշվետվությունների համակարգ:

⁴ Балаян Б.Т. Проблемы конвергенции финансовой отчетности лизинговых операций в Республике Армения// Известия аграрной науки, 2011, том 9, #4, стр. 133-135

⁵ Горголова Е.В., Риски лизинговых компаний в инновационных проектах, Ярославский педагогический вестник, #1 том 1, (Гуманитарные науки), 2011, стр. 78-79

Andreasyan H.H
Researcher at Armenian National Agrarian University
Andreasyan44@yandex.ru

RISK MANAGEMENT DEVELOPMENT WAYS IN LEASING OPERATIONS

Key words: financial risks, leasing, risk management, Basel agreement principles

Is analyzed leasing development trends in Armenian financial market and call attention to main obstacles for activating renting transactions. Particularly, is suggested Armenian legislation improvements concerning to leasing activity regulation in several fields, such us assets buying process in post contract period from leasers, profit tax exemption for leasing business, risky losses covering shearing between contract partners.

Андреасян А.А.
аспирант Армянского национального аграрного
университета.

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ УПРАВЛЕНИЯ РИСКАМИ ЛИЗИНГОВЫХ ОПЕРАЦИЙ

Ключевые слова: финансовые риски, финансовая аренда, риск менеджмент, принципы Базельских соглашений

Анализируются тенденции развития лизинга в финансовом рынке РА и выявлены основные существующие барьеры активизации арендных операций. В частности, предложены пути совершенствования нормативной базы регулирования лизинговой деятельности в таких областях, какими являются приобретение актива со стороны лизингополучателя после окончания контракта, налоговые привилегии, распределение обязательств по покрытию рисков и убытков между участниками контракта аренды.

Կոստանդյան Ն.Գ.

Հյուսիսային համալսարանի դասախոս, տ.գ.թ.

n_konst@mail.ru

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. ընտանիքի տնտեսական հարաբերություններ, անուղղակի ծախսեր, պահանջարկի և առաջարկի ներդաշնակեցում, այլ-ընտրանքային ծախսեր

Ցանկացած հասարակարգում ընտանիքը միշտ էլ համարվել է ապրանքների և ծառայությունների արտադրությանն սպառման հիմնական օղակը: Բացի այդ, ընտանիքում է ձևավորվում տնտեսության զարգացման կարևորագույն շարժիչ ուժը՝ մարդկային կապիտալը: Չնայած այն հանգամանքի, որ ընտանիքը հանդես է գալիս որպես հիմնաքար, որի վրա կառուցվում է հասարակության տնտեսաիրավական համակարգը, դեռևս տնային տնտեսությունների գործունեության տնտեսական վարքագիծը, առավել ևս՝ տնտեսաիրավական հարաբերությունների կարգավորման դաշտը խորությամբ չի ուսումնասիրվում մասնագիտական գրականության մեջ:

Տնային տնտեսությունները հանդես են գալիս որպես միկրոտնտեսական համակարգի սուբյեկտներ, և այս առումով հատկանշական է ընտանիքի դիտարկումը որպես յուրահատուկ «ֆիրմայի», որտեղ իրականացվում են ծախսեր, ձևավորվում են եկամուտներ, կատարվում է հասարակական բարիքների սպառում, կարգավորվում են ապրանքագույքային, աշխատանքային իրավական հարաբերություններ: Ժամանակակից տնտեսագիտական միտքը տնային տնտեսություններին դիտարկում է ոչ միայն որպես սպառման օղակի, այլև որպես շուկայական հարաբերություններում գործող տնտեսական միավորի, կազմված մեկ կամ մի քանի անդամներից, որոնք տնտեսավարման որոշումներ են կայացնում, ձգտում են իրենց պահանջմունքների առավելագույն բավարարմանը և ձևավորում են մարդկային կապիտալ:

Ընտանիքի վրա ներագդեցություն են գործում տնտեսական և բարոյական նորմերը, որոնք իրենց ազդեցությունն են թողնում տնային տնտեսությունների գործունեությունը կարգավորող իրավական հարաբերությունների վրա: Ամուսնությունը դիտարկվում է որպես անհրաժեշտ իրավական պայմանագիր տղամարդու և կնոջ միջև: Յուրաքանչյուր կողմը ընտանիքի շրջանակում ուղղակի կամ անուղղակիորեն որոշակի պարտականություն է ստանձնում, ունենալով կոնկրետ իրավունքների շրջանակ: Իրավունքների ամրակցումը ընտանիքի անդամներին կարևորվում է, քանի որ ոչ միշտ են ընտանեկան որոշումները կայացվում փոխադարձ խոստումների կամ պայմանավորվածությունների հիման վրա: Բարոյական նորմերից բացի, իրավունքների և պարտականությունների առկայությունն է որոշակիորեն կարգավորում ընտանիքի անդամների վարքագիծը:

Ամուսնության գործընթացի կարգավորումը կարելի է համեմատել ցանկացած կազմակերպության կանոնադրության գործունեության հետ: Երկու դեպքում էլ, խաղի կանոնները կարող են լինել ինչպես սահմանափակ, այնպես էլ ճկուն: Հնարավոր է, որ անգամ գույգերի ժամադրությունների կամ նշանադրության ժամանակահատվածը հենց նրա համար է, որ ձևավորվեն «ամուսնության պայմանագրային դրույթները», որոնք էլ հետագայում պետք է դրվեն նրանց հետագա կյանքի հիմքում (երեխաների թվաքանակը, կենցաղային պարտականությունների բաշխումը, որոշումների կայացումը անհատական կամ ընտանիքի անդամների համատեղ մասնակցությամբ): Կարելի էր կարծել, թե ընտանիքում ամեն ինչ կախված է սիրուց, սակայն պատասխանատվության առկայությունը և ընտանեկան իրավունքները էական դեր են խաղում ամուսնական կյանքում և կանխարգելում են ամուսնալուծությունը՝ համատեղ կյանքում ձևավորվող անհամաձայնությունների ժամանակ:

Դատարանի դերը ամուսնալուծության գործընթացում էական է և հանդես է գալիս տնտեսական հետևանքներով: Դատարանի միջնորդությունը երաշխավորում է ամուսնուն և կնոջը կարգավորելու համատեղ գույքի բաշխման գործընթացը, լուծում է սեփականության իրավունքի հիմնահարցեր: Այս նկատառու-

մով, համատեղ կյանքում ամուսինները ընտանեկան ակտիվներում շահագրգռված են ներդնելու իրենց ժամանակն ու ռեսուրսները այնպես, որ նյութական բազայի վրա ձևավորվեն հստակ իրավահարաբերություններ: Եվ եթե վերանում ենք փոխադարձ սիրո զգացմունքայնությունից, որը ամուսնության հիմքն է, ապա տնային տնտեսությունը հաճախ դիտարկվում է նաև որպես ներդրումային ծրագիր, որից մի քանի տարի անց տնտեսական հատույց է սպասվում (ընտանիքի անդամների ընդլայնում, նյութական ակտիվների աճ):

Ամուսնության մեջ գտնվող մարդկանց վարքագիծը, որպես կանոն, ռացիոնալ է գնահատվում: Ընտրելով իր գույզին, տղամարդը կամ կինը ընտանիքում առավելագույնի է հասցնում իր գործունեության օգտակարությունը: Ամուսնության նախաշեմին յուրաքանչյուր անհատ կամա թե ակամա կանգնում է հետևյալ երկու հարցադրումների առջև. ինչպիսի՞ն կլինեն «ամուսնության օգուտները» համեմատած ամուրի կյանքի հետ, իր գուզընկերոջը ընտրելիս որքա՞ն հաստատակամություն պետք է ունենա ամուսնության շեմին հայտնված անձը, հաշվի առնելով այդ օգուտները:⁶

Համաձայն մարքիստական տեսության, տնային տնտեսության ծախսերը ուղղակիորեն ներկայանում են որպես ապրանքների, ծառայությունների սպառմանն ուղղված ռեսուրսներ: Նման ծախսերը կարող են արտադրական բնույթ կրել, ինչպես օրինակ սննդի պատրաստումը, հագուստի կարումը, կացարանի նորոգումը, և կարող են իրականացվել շրջանառության ոլորտում, սպառման առարկաներ գնելիս կամ ծառայություններ ստանալիս: Սակայն, տնտեսագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվում, որ ուղղակի ծախսերից բացի, տնային տնտեսություններում ձևավորվում են անուղղակի ծախսեր, որոնք հանդիսանում են ընտանեկան իրավահարաբերությունների արդյունք, և ոչ միշտ է, որ ենթարկվում են արժանահավատ չափման և գնահատման:

⁶ Ն. Խաչատրյան, Տնտեսական իրավունք, մենագրություն, «Էդիթ Պրինտ», Եր, 2011 թ., էջ 115-116

Ընտանեկան հարաբերությունները դիտարկելիս վերլուծվում են նաև ամուսնության ծախսերը: Այստեղ ամենակարևորը անկախության արժեքն է: Մարդիկ երբեք չեն կարողանում լիարժեք ազատորեն անել այն, ինչ ցանկանում են, քանի որ հաշվի են նստում ընտանիքի մյուս անդամների հետ: Ընտանիքում, առավելապես առանցքային որոշումները կայացվում են կոլեկտիվ և դեմոկրատական սկզբունքով: Ընտանիքի անդամները, որոշակիորեն կորցնելով իրենց անկախությունը, գիտակցում են, որ հետագայում էլ պատրաստ են որոշակի ծախսեր իրականացնելու: Այսպես, ամուսնացած տղամարդու համար նոր մեքենա գնելու ցանկությունը առավել «թանկ է», քան ամուրի տղամարդու համար, քանի որ առաջինը իր ցանկության իրականացումը պետք է համաձայնեցնի կնոջ հետ, որը կարող է երկար ժամանակ պահանջել: Եթե ամուսինն ու կինը ունենային միևնույն նախասիրությունները, որը կյանքում հաճախ չի պատահում, ապա նրանց որոշումների կայացման ծախսերը կլինեին նույնը, ինչ ամուրի անձանց մոտ:

Նման ծախսերի կրճատման նպատակով ընտանեկան գույքերը հաճախ որոշումներ են կայացնում վարչական սկզբունքով՝ միակողմանիորեն: Այսպես, մեկին տրվում է իրավունք կազմակերպելու ընտանեկան ամենօրյա կերակուրը, առանց ընտանիքի մնացած անդամների հետ խորհրդակցելու: Մյուսին նույն ձևով իրավունք է տրված կենցաղային գնումներ կատարելու: Դրանով իսկ, յուրաքանչյուր կողմին իրավունք է վերապահվում որոշումներ կայացնելու, առանց մյուս կողմի համաձայնության, որն էլ, որպես կանոն, ընտանեկան իրավահարաբերություններում հանգեցնում է որոշումների կայացման ծախսերի կրճատման: Ընտանիքի ներսում որոշումների կայացման իրավունքների բաշխումը տնային տնտեսությունների գործունեությունը դարձնում է առավել արդյունավետ:⁷

Ընտանիքի անդամները հավասարապես են օգտվում տնային տնտեսության ընդհանուր օգտագործման գույքից, հանդիսա-

⁷ Экономическая теория, под ред. проф. В.И.Видянина, Г.П. Журавлевой, Российская экономическая академия", М., 2000 г., стр. 298-299

նում են ապրանքների և ծառայությունների սպառման լիիրավ անդամներ: Սակայն, ոչ միշտ է, որ բոլոր անդամները միահամուռ համաձայն են այս կամ այն ապրանքի ձեռքբերման գծով, կամ նրանց ճաշակն ու ցանկությունները սպառման գծով համընկնում են: Այսպես, կոնկրետ մակնիշի ավտոմեքենա ձեռքբերելիս ընտանիքի ոչ բոլոր անդամների ճաշակն է բավարարվում (իսկ նմանօրինակ դեպքերը բազմաթիվ են), որն էլ անձերի մոտ ձևավորում է սեփական նախապատվությանը համապատասխան բավարար քանակով և որակով ապրանքների կամ ծառայությունների չսպառման ծախսեր:

Նման ծախսերի առկայությունը հիմնականում պայմանավորված է ընտանիքի անդամների միջև կոմպրոմիսային հարաբերությունների առկայությամբ: Ավտոմեքենայի, ընդհանուր օգտագործման այլ ապրանքների, տարաբնույթ հեռուստահաղորդումների միասնական սպառումը, որոշակի ընկերների հետ համընդհանուր շփումը կնոջ և տղամարդուն լիարժեք ցանկությունը չէ, այլ ընտանեկան նորմալ հարաբերություններին կատարած երկուստեք զիջողական դիրքն է, որը հանգեցնում է անկախության զիջման լրացուցիչ ծախսերի:

Քանի որ ընտանիքում, որպես կանոն, որոշումները դեմոկրատական սկզբունքով են իրականացվում, ընտանիքի անդամները ունեն ոչ միայն ձայնի իրավունք, այլև ընտանեկան ընդհանուր բյուջեում իրենց եկամուտների բաժնեմասի ներդրման պարտավորվածություն: Ստացվում է այնպես, որ եկամուտ ստացող յուրաքանչյուր անձ յուրօրինակ ձևով «հարկվում է» տնային տնտեսության կողմից: Ընտանեկան բյուջեի ձևավորման նման բաժնեմասնակցությունը ոչ միայն կարող է իր չափաբաժիններով դուր չգալ յուրաքանչյուր անձին, այլև չհամընկնել ընտանեկան ծրագրերի իրականացման սեփական ցանկություններին, դրանով իսկ առաջացնելով անդամների մոտ պոտենցիալ ծախսեր:


Միաժամանակ հարկ է նշել նաև, որ ընտանեկան հարաբերությունները ուղեկցվում են ոչ միայն լրացուցիչ ծախսերով, այլև ամուսնական անուղղակի օգուտներով: Նախ, ամուսինները հնարավորություն են ունենում իրենց համատեղ կյանքում ձեռքբերելու արժեքներ, որը չէր ստացվի ամուրի կարգավիճակում:

Դրանց են վերաբերում երեխաների ծնունդը, ընտանիքի պատշաճ վարքագծից ձևավորվող հարգանքն ու հասարակական համակրանքը:

Բացի այդ, ներկայանալով որպես մի քանի անդամներից բաղկացած տնային տնտեսություն, ընտանիքում արտադրության և սպառման գործընթացը առավել արդյունավետ է կազմակերպվում, քան առանձին անհատների մոտ: Ընտանիքում օգտագործվող շատ իրեր և առարկաներ հանրային արժեքներ են ներկայացնում և սպառման են ուղղվում նաև ընտանիքից դուրս գտնվող անձանց համար (արվեստի գործեր, դեկորատիվ առարկաներ և այլն), կրճատելով վերջիններիս մոտ նմանօրինակ պահանջմունքների բավարարման ծախսերը: Տնային տնտեսություններում բարձրանում է աշխատանքի արդյունավետությունը մասնագիտացման խորացման պարագայում, երբ ընտանիքի անդամներից մեկը զբաղվում է կերակուրի պատրաստմամբ, մյուսը՝ բնակարանի հարդարմամբ ու ընթացիկ նորոգմամբ, երրորդը՝ տնամերձ այգու մշակմամբ և այլն:

Մյուս կողմից, եթե ընտանիքում որոշում է կայացվում աշխատանքի բաշխում կատարելու, ապա մասնագիտացման անհրաժեշտությունից բացի, ծախսերի խնայման նկատառումով հնարավորինս տնային տնտեսության աշխատանքներին զոհաբերվում է դրսում ծախսվող համեմատաբար էժան աշխատաժամանակը: Այսպես, եթե կնոջ աշխատավարձը էականորեն գերազանցում է ամուսնու աշխատավարձին, ապա վերջինս ստիպված իր վրա է վերցնում կենցաղային լրացուցիչ պարտականություններ (գնումներ, երեխաների ուսման վերահսկողություն, նախաճաշի պատրաստում և այլն), որոնք ավանդաբար կնոջ գործառույթների շրջանակում են գտնվում, սակայն կատարվում են ամուսնու կողմից, ընտանեկան բյուջեն բարելավելու նպատակով:⁸

⁸ Ճուղուրյան Ա., Խաչատրյան Ն., Մասնագիտական կրթության տնտեսագիտություն, Եր., «Էդիտ Պրինտ», 2010 թ., էջ 94-98



Գծապատկեր 1 Ընտանիքի տնտեսաիրավական գործունեության կարգավորման նորմերի հակակշռումը⁹

Հետևաբար, տնային տնտեսության արդյունավետ վարումը ձևավորում է ընտանեկան յուրահատուկ իրավահարաբերություններ, որոնց շնորհիվ մի կողմից կրճատվում են ամուսնական գոր-

⁹ Կազմված է հեղինակի կողմից:

ծընթացի անուղղակի ծախքերը, մյուս կողմից ավելանում անուղղակի օգուտները: Ամուր ընտանիքի գոյատևման նախապայմաններից է ոչ միայն սիրո և ընտանիքի անդամների միջև փոխադարձ համաձայնության առկայությունը, այլև տնային տնտեսությունների ուղղակի, անուղղակի ծախքերի, ինչպես նաև օգուտների միջև օպտիմալ հարաբերակցության սահմանումը:¹⁰

Տնտեսաիրավական հարաբերությունների կարգավորման դաշտը ընտանիքում հանդես է գալիս մի շարք առանձնահատկություններով:

Առաջին, ընտանիքի անդամները միմյանց նկատմամբ կատարելով «կոմպրոմիսային գոհաբերություններ», համատեղ կյանքի ընթացքում կրում են անուղղակի ծախքեր՝ որոնք տնտեսագիտական չափման և արժևորման դժվար են ենթարկվում:

Երկրորդ, տնային տնտեսությունների անուղղակի ծախքերի և օգուտների համամասնական ձևավորումը կարգավորվում են ընտանեկան իրավունքի նորմերով (համատեղ գույքի տնօրինման իրավունք, երեխաների խնամակալություն և այլն), որը կարևոր նախապայման է հանդիսանում ամուր ընտանիքի ձևավորման գործընթացում:

Երրորդ, ընտանիքի դերը շուկայական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգում ազդեցիկ է և միաժամանակ որոշիչ է երկրի տնտեսական զարգացման գործընթացում, քանի որ ներդաշնակ իրավահարաբերություններով կարգավորվող տնային տնտեսությունների գործունեությունը մակրոտնտեսական կայունություն է ապահովում:

¹⁰ Быков А.Г., Предпринимательское право: проблемы формирования и развития, Вестник МГУ, серия #11 (Право), 1993, #6, стр. 4-16

Kostandyan N.G.

Ph.d in economics

assistant professor. at the Northern University

HOUSEHOLDER ENTITES IN MARKET ECONOMY RELATIONS

Key words: family economy relations, indirect costs, harmonization demands and supplying, alternate costs.

Householders entities activity is a special field of research in market economy relation framework. In article is discussed peculiarities of economic relations in families. Particularly, is mentioned necessity of measurement not only direct and indirect costs of family development, but also alternate financial reassures requirements assessments, which is having important role of human capital formation analyzing process in macro economy level of country.

Костандян Н.Г

кандидат экономических наук, Северный университет Армении

ДОМАШНИЕ ХОЗЯЙСТВА В РЫНОЧНЫХ ОТНОШЕНИЯХ

Ключевые слова: экономические отношения в семье, косвенные расходы, гармонизация спроса и предложения, альтернативные расходы

Деятельность домашних хозяйств - специфическая сфера в исследованиях рыночной экономики. В статье обсуждаются особенности экономических отношений в семьях. В частности, обосновываются не только измерения прямых и косвенных расходов, но и альтернативные финансовые ресурсы развития семьи, что играет важную роль в процессе анализа формирования человеческого капитала на макроэкономическом уровне страны.

Ավետիսյան Ս. Ս.

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր
samvelser@gmail.com

Ավետիսյան Ա. Ս.

ՀԱԱՀ դասախոս, տ. գ. թ. controlchamber@gmail.com

Հունանյան Լ. Ս.

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հայցորդ
hunanyan-85@mail.ru

**ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՆՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Բանալի բառեր - ագրոապահովագրություն, ռիսկ, ապահովագրավճար, սուբսիդավորման միջազգային փորձ

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցությունը բնութագրվում է ոչ միայն բյուջետային ֆինանսավորման բացարձակ մեծությամբ, այլև դրա կառուցվածքով և հատկացումների օգտագործման արդյունավետության ցուցանիշներով: Այս տեսանկյունից, որպես գյուղատնտեսության պետական աջակցության գերակա ուղղություն, անհրաժեշտ է ներդնել գյուղատնտեսական ապրանք արտադրողների և պետության համաֆինանսավորումով, այսինքն սուբսիդավորումով՝ ապահովագրական համակարգ: Փորձենք որոշակի հիմնավորում տալ այս տեսակետին:

Կլիմայի փոփոխությունը և գյուղատնտեսության արդյունաբերականացումը թելադրում են մթնոլորտային երևույթներով պայմանավորված ռիսկերի կառավարման նոր մոտեցումներ: Դրանք դրսևորվում են երկու հիմնական ուղղություններով: Առաջինը՝ ռիսկերի կանխարգելման և հետևանքների մեղմացման ենթակառուցվածքային համակարգի զարգացումն է, իսկ երկրորդը՝ արդիական ապահովագրական մոդելների լայնամասշտաբ կիրառումը: Գործնականում առավել բարձր արդյունք

է ապահովում վերոհիշյալ ուղղությունների խելամիտ համատեղումը:

Հայաստանի ագրարային ոլորտում, եթե բնական ռիսկերի կանխարգելման և հետևանքների մեղմացման առումով որոշակի քայլեր կատարվում է (ռոտզման համակարգերի զարգացում, հակահեղեղային միջոցառումներ, ցրտադիմացկուն, երաշտադիմացկուն, հիվանդությունների և վնասատուների դեմ առավել կենսունակ սորտերի և ցեղերի շրջանացում, հակակարկտային տեղակայանքների կիրառում և այլն), ապա գյուղատնտեսության ապահովագրումը դեռևս իսպառ բացակայում է: Իրականությունն այն է, որ ագրարային ոլորտի բարձր ռիսկայնությունը, համապատասխան նորմատիվային հիմքերի և մեթոդաբանության բացակայությունը, արգելակում է այս կարևոր գործիքի կիրառումը: Իհարկե, ոչ առանց հիմքի, տիրապետող է այն կարծիքը, որ գյուղատնտեսության ոլորտը, հատկապես բուսաբուծության ճյուղը, ապահովագրական ընկերությունների համար բիզնեսի առումով հետաքրքրություն չի ներկայացնում՝ բնական գործոններից ծայրահեղ կախվածության և բարձր ռիսկայնության պատճառով: Այս կարծիքը տիրապետող է ոչ միայն Հայաստանում: Ագրոապահովագրության համաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ նման հիմնախնդիր առկա է բազմաթիվ երկրներում: Այնպես որ, անգամ ագրարային ոլորտի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման, ապահովագրական շուկայի ընդլայնման, ապահովագրության նոր մեթոդների ներդրման և օրենսդրական հիմքերի կատարելագործման պայմաններում՝ ագրոապահովագրությունը մնում է հիմնախնդիր և դանդաղ է ծավալվում:

Դեռևս լուրջ բանավեճի թեմա է գյուղատնտեսության պարտադիր ապահովագրությունը, միանշանակ չեն պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության վերաբերյալ մոտեցումները, առկա են տարակարծություններ ապահովագրության օբյեկտների ընտրության, ապահովգրավճարների չափերի, կորուստների գնահատման և փոխհատուցման հարցերում: Հատկապես վիճահարույց է պետական աջակցությամբ ագրոապա-

հովագրության նպատակահարմարության հարցը: ¹¹ Կարծիք կա, որ ապահովագրության սուբսիդավորումը ձեռնառու է միայն ապահովագրական ընկերություններին, իսկ գյուղացիական տնտեսությունների համար առավել շահեկան է տարերային աղետների հետևանքների վերացման նպատակով միանվագ ուղղակի աջակցությունը: ¹² Առավել ազատական թևի ներկայացուցիչներն ընդհանրապես ընդդիմանում են մասնավոր հատվածին պետական աջակցության, առավել ևս՝ սուբսիդավորումով ագրոապահովագրության ծրագրերին: Նման մոտեցման հիմնական փաստարկն այն է, որ շուկայական տնտեսության պայմաններում ապրանքային արտադրության բոլոր մասնակիցներն ունեն տնտեսական ինքնուրույնություն և պատասխանատվություն են կրում իրենց արտադրական գործունեության արդյունքների համար: Միաժամանակ, հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրներում, մասնավոր գործարարության պետական հովանավորչությունը, մասնավորապես՝ պետական բյուջեից սուբսիդիաների հատկացումը, առաջացնում է գործադիր իշխանության կառույցների կողմից այդ միջոցների մի մասի յուրացում, ոչ արդյունավետ տեղաբաշխում և այլ կոռուպցիոն ռիսկեր: Բացի դրանից, պետական աջակցության որոշակի սահմանափակումներ է պարտադրվում նաև Համաշխարհային առևտրի կազմակերպության (ՀԱԿ) անդամ երկրներին, որը թելադրված է համաշխարհայի առևտրի կանոնակարգման շահերով: Այդուհանդերձ, երկրի տնտեսական և պարենային անվտանգության, գյուղատնտեսության սոցիալական կարևորության, գյուղական բնակչության աղքատության հաղթահարման և միգրացիոն գործընթացների կառավարման, բնակլիմայական

¹¹ Агрострахование как кормушка,
<http://www.rosbalt.ru/business/2012/12/10/1069164.html>

¹² Агрофинансирование и агрострахование: повышение эффективности,
<http://svetich.info/publikacii/aktualnoe-intervyu/agrofinansirovanie-i-agrostrahovanie-cel.html>

գործոններից արտադրության արդյունքների բարձր կախվածության նկատառումներով, աշխարհի բազմաթիվ երկրներում տարբեր խողովակներով պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսությանը: Վերջինս դրսևորվում է գյուղատնտեսական ապրանք արտադրողներին բյուջետային սուբսիդիաներ տրամադրելու, արտադրանքի վաճառքի երաշխավորված գներ սահմանելու, վարկերի տոկոսադրույքը սուբսիդավորելու, բույսերի պաշտպանության, անասնաբուժասանիտարական, հողաբարելավման կենտրոնացված միջոցառումներ իրականացնելու, գյուղի սոցիալական ենթակառուցվածքները զարգացումը ֆինանսավորելու, հարկային արտոնություններ սահմանելու և այլ ձևերով: Արտադրական ռիսկերի կառավարման նպատակով, հատկապես վերջին տասնամյակներին, աշխարհի շատ երկրներ կարևոր տեղ են հատկացնում նաև պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության ներդրմանը: Այս համակարգը տարեց-տարի ընդլայնվում ու կատարելագործվում է, միաժամանակ, տարբեր երկրներում առկա են այդ համակարգի կիրառման առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում գտնել Հայաստանի համար առավել ընդունելի տարբերակներ: Ահավասիկ, աղյուսակ 1-ում ներկայացված երկրների տվյալները ցույց են տալիս, որ պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունը համեմատաբար նոր միջոցառում է և անգամ աշխարհի զարգացած երկրներում այն գտնվում է կայացման և արդիականացման փուլում: Գյուղատնտեսության պետական աջակցության և գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այս կարևոր գործիքը առաջինը կիրառվել է ԱՄՆ-ում՝ դեռևս անցյալ դարի 90-ական թվականներից:

Աղյուսակ 1

Պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունը
աշխարհի մի քանի երկրներում (2010թ.)¹³

Երկրները	Ագրոապահովագրության ներդրման սկիզբը	Ագրոապահովագրության շուկայի ծավալը, մլն. դոլար	Սուբսիդավորում մլն. դոլար	Ապահովագրված տարածքների ընդգրկվածությունը սուբսիդավորման ծրագրում, %
ԱՄՆ	1990-ական	12000	6000	90
Չինաստան	2003	3000	1500	15
Իտալիա	2003	380	190	10
Ռուսաստան	2012	312	187.5	17-19
Հնդկաստան	2002	135	67.5	14
Թուրքիա	2006	300	150	8

ԱՄՆ-ում ագրոապահովագրության սուբսիդավորումը իրականացնում է Ռիսկերի կառավարման գործակալությունը (RMA): Ապահովագրական արտադրանքները մշակում է գործակալությունը, բայց ապահովագրական ծառայությունները մատուցում են հավատարմագրված ապահովագրական կազմակերպությունները: Ապահովագրողներն աշխատում են գործակալության կողմից սահմանած ապահովագրական դրույքներով: Պետության կողմից սուբսիդավորվող ապահովագրավճարի հատվածը կախված է կորուստները ծածկելու տոկոսից: Որպես կանոն, կորստի առավելագույն՝ 70% հատուցմանը համապատասխանում է 50, իսկ 60%-ին՝ 30% սուբսիդավորում: Ներկայումս ապահովագրված են գյուղատնտեսական ապրանք ար-

¹³ <http://www.agroinsurance.com/ru/pratice/?pid=11473#sthash.xTK1WqeQ.dpuf>

տադրողների ավելի քան 50 %-ը և ցանքատարածությունների մոտ 70%-ը:

Թուրքիայում պետական աջակցությամբ ագրոապահովագրման համակարգը կիրառվում է 2006 թ-ից: Այդ գործունեությունը իրականացվում է TARSIM /Subsidised agricultural insurance in Turkey/ գործակալության միջոցով: Մինչև 2012թ. 6 տարվա ընթացքում այս կառույցին հաջողվել է ընտրել և վերավորակավորել գյուղատնտեսության ապահովագրության նոր համակարգի 1700 մասնագետ: Թուրքիայում այս համակարգով ապահովագրվում է 36 անուն մշակաբույս: Հիմնական մշակաբույսերն են՝ հացահատիկը, խաղողը, լոլիկը, ծիրանը և ձիթապտուղը: TARSIM-ի դիտորդական խորհրդի կազմում ընդգրկված են գյուղատնտեսության նախարարության, գանձապետարանի և ապահովագրական կազմակերպությունների ներկայացուցիչները: Ինչպես ապահովագրավճարները, այնպես էլ սուբսիդիայի գումարները վճարվում են TARSIM-ին: Վերջինս իրականացնում է նաև այդ գումարների վերաապահովագրումը: Վեց տարվա ընթացքում ցանքատարածությունների ապահովագրումը 1 տոկոսից հասել է 8,2 տոկոսի, իսկ ապահովագրության միջոցները 27 մլն եվրոյից՝ 200 մլն եվրոյի:¹⁴

Ավստրիայի ագրոապահովագրության մոդելը նման է Թուրքիային: Այստեղ նույնպես ապահովագրողները ստեղծել են առանձին ապահովագրական միավորում՝ Ավստրիական ապահովագրական գրադ կազմակերպությունը (Die Österreichische Hagelversicherung), զբաղվում է միայն ագրոապահովագրման հարցերով և որևէ այլ ապահովագրական ծառայություն չի իրականացնում: Պարտադիր ագրոապահովագրության բացակայության պայմաններում, այս կառույցը կարողացել է ընդգրկել շուկայի 85 %-ը:

Իսրայելում գործում է ագրոապահովագրման պարտադիր համակարգ և ագրոարտադրությունը 100%-ով ապահովագրված է: Այդ նպատակով 1967 թ. հիմնադրվել է Կլիմայական ռիսկերի

¹⁴ Subsidised agricultural insurance in Turkey; Bulent Bora, General Manager of TARSIM. Turkey / 54 / 2010, p. 12-17

կառավարման պետական կոմիտե (KANAT): Այս կազմակերպությունը կենտրոնացված կարգով իրականացնում է ագրոապահովագրության բոլոր ծրագրերը: Ապահովագրավճարների մոտ կեսը սուբսիդավորվում է պետության կողմից: Այդ գումարը հատկացվում է հետևյալ համամասնությամբ՝ այգեգործություն՝ 42%, բանջարաբուծություն՝ 30%, անասնաբուծություն՝ 20% և դաշտային մշակաբույսերին՝ 8%: Հավաքված ապահովագրավճարը 2012թ. կազմել է 280 մլն ԱՄՆ դոլար:¹⁵

Չինաստանում պետական սուբսիդավորումով ագրոապահովագրությունն իրականացում է Ագրոապահովագրողների ազգային միությունը (ԱԱՄ): Թեև այս ծրագիրն սկսվել է 2003 թ., բայց զարգացման տեմպերը բավականին բարձր են և 2013թ. ագրոապահովագրման շուկայի ծավալը հասել է 5 մլն դոլարի, իսկ վճարումները 3,4 մլն դոլարի, որը ԱՄՆ-ից հետո երկրորդ ցուցանիշն է: Ի դեպ, մինչև 2007թ. պիլոտային ծրագրի կարգավիճակով մի քանի նահանգներում ապահովագրվում էր խիստ սահմանափակ թվով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքը, 2008թ. ծրագրում ներառվեցին նաև գյուղատնտեսական կենդանիները, իսկ 2012թ-ից ծրագիրն ընդգրկեց ավելի մեծ թվով մշակաբույսեր և իրականացվում է ամբողջ երկրում: Ըստ Չինաստանի ԱԱՄ-ի տվյալների, 2013թ-ին ապահովագրվել է 73 մլն հա, որը կազմում է գյուղատնտեսական հողատեսքերի 45%-ը: Ագրոապահովագրական շուկայի միջին տարեկան աճը կազմել է 23%:¹⁶

Կարելի է շարունակել այն երկրների ցանկը, որտեղ հաջողությամբ ներդրվում է պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության համակարգը, սակայն սահմանափակվենք նշված երկրներով և Հայաստանի պայմաններում այն կիրառելու առումով կատարենք մի քանի ընդհանրացումներ:

1. ՀՀ մարզերն ունեն որոշակի բնակլիմայական առանձնահատկություններ և յուրաքանչյուր տարածաշրջանի մթնոլոր-

¹⁵ <http://www.kanat.co.il/templates/kanat/images/KANAT2012.pdf>

¹⁶ Успех Китая в агростраховании основан на правильной стратегии субсидирования <http://prodmagazin.ru/2014/03/13/>

տային վնասակար երևույթների տեսքով առավել յուրահատուկ են որոշակի ռիսկեր: Միանգամայն պարզ է, որ բոլոր ռիսկերից միաժամանակյա ապահովագրումը դեռևս իրատեսական և արդյունավետ չէ: Հետևաբար անհրաժեշտ է ռիսկերի և բյուջետային հնարավորությունների գնահատման, ինչպես նաև ապահովադիրների ցանկությունների ուսումնասիրության հիման վրա կատարել տարածքների և ռիսկերի ընտրություն:

2. Գյուղատնտեսության ապահովագրության կարևորությունը և դժվարությունները գնահատելով, անհրաժեշտ է ներդնել այնպիսի ապահովագրական համակարգ, որը հավասարապես արտահայտի, թե ապահովադիրի և, թե ապահովագրողի շահերը: Այսինքն, հանուն գյուղացիական տնտեսությունների ռիսկերի չեզոքացման, ապահովագրական ընկերությունները չեն ավելացնելու իրենց ռիսկերը, ուստի դրանք հավասարակշռելու խելամիտ տարբերակը պետական սուբսիդավորումով ագրոապահովագրական համակարգի ներդրումն է:

3. Պետությունը իր վրա վերցնելով ապահովագրավճարների մի մասը, լուծում է տնտեսական, սոցիալական և քաղաքական կարևոր խնդիր, որոնք խաչաձևվում են երկրի պարենային անվտանգության և ագրոբիզնեսի կայացման միջոցով՝ գյուղական բնակչության բարեկեցության բարձրացման հանգուցային կետում:

4. Համակարգի ներդրման սկզբնական փուլում բյուջեի ծանրաբեռնվածությունը մեղմելու անհրաժեշտությունից ելնելով, առաջարկում ենք ապահովագրել առավել ռիսկային տարածքների առավել բարձրարժեք մշակաբույսերը: Դիցուք, առաջարկվում է առաջնահերթ կերպով իրականացնել ՀՀ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզի նախալեռնային (ծովի մակարդակից մինչև 1200 մ բարձրության) և Վայոց ձորի մարզի ցածրադիր համայնքների խաղողի և պտղի այգետարածքների ու զարնանային ցրտահարության և մինչև բերքահավաքը կարկտահարության ռիսկերը: Հաջորդ փուլում նպատակահարմար է ապահովագրական ծրագրում ներառել նաև բանջարանոցային մշակաբույսերի մինչև ծաղկումը ընկած ժամանակահատվածի ծախ-

սերը և ծաղկումից մինչև բերքահավաքը ընկած ժամանակահատվածի ցրտահարության և կարկտահարության ռիսկերը:

5. Համակարգի ծավալման հետագա փուլերում պետք է ըստ կարևորության ներառել մնացած մարզերի գյուղատնտեսական մշակաբույսերը, իսկ անասունների հաշվառման և համարակալման ծրագիրը իրականացնելուց հետո նաև՝ անասունների ապահովագրումը: Այն կարծիքը, որ ցածր ռիսկայնությունը թույլ է տալիս անհապաղ սկսել գյուղատնտեսական կենդանիների ապահովագրությունը, մեր կարծիքով հիմնավորված չէ և կարող է հերթական անգամ վարկաբեկել պետական աջակցությամբ ագրոապահովագրության կարևոր գաղափարը:

6. Վերոհիշյալ գործընթացը պահանջում է պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության օրենսդրական, նորմատիվային և ֆինանսաբյուջետային հիմքերի ձևավորում: Կարծում ենք, որ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու պարագայում մինչև 2014թ. հոկտեմբերի սկիզբը հնարավոր է Ազգային ժողով ներկայացնել և ընդունել «Պետական աջակցությամբ ագրոապահովագրության զարգացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Դրա հետ մեկտեղ 2015-2018 թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագրում և 2015թ. ՀՀ բյուջեի նախագծում ներառել պետական սուբսիդավորումով ագրոապահովագրության ծրագիրը և բյուջետային հատկացումների նախահաշիվը: Իհարկե, այս համակարգի ներդրումը պահանջում է նաև նորմատիվային ակտերի ամբողջական փաթեթի ընդունում, որի աշխատանքները ՀՀ կառավարությունը պետք է իրականացնի, համագործակցելով շահագրգիռ ապահովագրական կազմակերպությունների հետ: Մեր նախնական հաշվարկներով 3-րդ կետում նշված օբյեկտներում, ապահովագրավճարների 50/50 բաշխման պայմաններում, պետության կողմից հատկացվող սուբսիդիայի տարեկան գումարը կարող է կազմել 7-8 մլրդ դրամ, որը բյուջեի խելամիտ վերաբաշխման պայմաններում միանգամայն հնարավոր աջակցություն է:

Իհարկե, բացի ագրոապահովագրության համակարգից, երկրի պարենային անվտանգության շահերը պահանջում են կիրա-

նել ագրարային ոլորտի պետական կարգավորման այլ միջոցառումներ, որոնք նույնպես պահանջում են որոշակի պետական աջակցություն:

Самвел Аветисян

директор исследовательского центра «Амберд» Армянского государственного университета экономики, д.э.н., профессор

Ашот Аветисян

преподаватель Армянского национального аграрного университета, к.э.н

Луиза Унанян

соискатель Армянского национального аграрного университета.

ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА АГРОСТРАХОВАНИЯ С ГОСУДАРСТВЕННОЙ ПОДДЕРЖКОЙ В АРМЕНИИ

Ключевые слова: агрострахование, риск, страховая премия, субсидия, международный опыт.

Сельскому хозяйству, как основе продовольственной безопасности страны, важной составляющей регионального развития и основной отрасли занятости сельского населения во многих странах оказывается государственная поддержка. Однако, не всегда бюджетные средства выделяются для решения наиболее актуальных и приоритетных проблем. В данной статье в результате изучения международного опыта предлагается принятие соответствующих нормативных актов и рассматриваются вопросы реализации пилотной программы внедрения субсидированного агрострахования.

Samvel Avetisyan,
Director of ASUE 'Amberd' Research Center, Doctor of Economic
Sciences, Professor
Ashot Avetisyan,
Lecturer at Armenian National Agrarian University, Doctor of Economics
Luisa Hunanyan,
Researcher at Armenian National Agrarian University

INTERNATIONAL EXPERIENCE OPPORTUNITIES OF APPLYING AGRO INSURANCE WITH STATE SUPPORT IN ARMENIA

Key words: agro insurance, risk, insurance covering, subsidizing, international experience

Many countries approve state support to agriculture as food security basis for a country, important component of regional development and main sphere of activities of rural population. There are some cases that State budget support is not allocated to solving urgent and priority issues. The articles presents Agro insurance as such an issue and examines international experience by suggesting adopt due legal acts to implement agro insurance pilot projects with State support in regions with high level of risk.

Rishma R.V.

California State University, Northridge

rishma.vedd@esun.edu

Nune Srapyan

Head of the Department of International Relations of Northern University

nune_18@mail.ru

Armen Tshuguryan

Professor of Northern University, Doctor of Economics

jarmen1@mail.ru

CONTEMPORARY ISSUES OF ECONOMICS POST GRADUATE STUDIES

Key words: Bologna process, student-centered education, doctoral studies, Post graduate education Salzburg principles

The scope of postgraduate professional education issues is more than that of Bachelor's or Master's programs, which is caused by a number of circumstances. First, post-University education is a relatively new filed in our Republic. As early as two decades ago it was not functioning and postgraduate one was operating instead. However, in fact, it could not be considered as education, as it was mainly directed to a student's research activities where educational component (2-3 qualification examinations) did not have a significant stake in a student's academic load. Educational component has a major role in the postgraduate educational system, according to which a postgraduate student should accumulate about 40% of academic credits not from research but from education sector.

In addition, a postgraduate student used to previously study in a teacher-centered system having an academic supervisor and being mostly overwhelmed by preparation and defense of thesis mostly implementing local activities. However, postgraduate educational system, which is also called doctoral studies in Western countries, does not imply just localized frame of a postgraduate student's activities. Here, the major players are regularly organized workshops, debate clubs, which imply a team work, especially when team working practice and joint postgraduate activities are also included in the curriculum of doctoral studies (see figure 1).

And, finally, postgraduate educational system also requires active collaboration of the University research departments and employers, when postgraduate students strive to commercialize their scientific elaborations and improve Universities' financial stability.




Figure 1. Student Workload Comparing in Doctorial Between Aspirantura Study Systems¹⁷

In this regard, Salzburg principles have not lost their relevance. They are as follows:¹⁸

1. The core component of doctoral training is the advancement of knowledge through original research. At the same time it is recognized that doctoral training must increasingly meet the needs of an employment market that is wider than academia.

2. Embedding in institutional strategies and policies: Universities as institutions need to assume responsibility for ensuring that the doctoral programs and research training they offer are designed to meet new challenges and include appropriate professional career development opportunities.

3. The importance of diversity: The rich diversity of doctoral programs in Europe – including joint doctorates – is a strength which has to be underpinned by quality and sound practice.

¹⁷ Composed by authors

¹⁸ Salzburg Principles, 3-5 February 2005, meeting date

4. Doctoral candidates as early stage researchers: should be recognized as professionals – with commensurate rights – who make a key contribution to the creation of new knowledge.

5. The crucial role of supervision and assessment: In respect of individual doctoral candidates, arrangements for supervision and assessment should be based on transparent contractual framework of shared responsibilities between doctoral candidates, supervisors and the institution (and where appropriate including other partners).

6. Achieving critical mass: Doctoral programs should seek to achieve critical mass and should draw on different types of innovative practice being introduced in universities across Europe, bearing in mind that different solutions may be appropriate to different contexts and in particular across larger and smaller European countries. These range from graduate schools in major universities to international, national and regional collaboration between universities.

7. Duration: doctoral programs should operate within an appropriate time duration (three to four years full-time as a rule).

8. The promotion of innovative structures: To meet the challenge of interdisciplinary training and the development of transferable skills.

9. Increasing mobility: Doctoral programs should seek to offer geographical as well as interdisciplinary and intersectoral mobility and international collaboration within an integrated framework of cooperation between universities and other partners.

10. Ensuring appropriate funding: the development of quality doctoral programs and the successful completion by doctoral candidates requires appropriate and sustainable funding.

Economic postgraduate studies in our Republic has been considered not as education but as research activities. After the admission a postgraduate student had to pass three or four qualification exams, one of which had traditionally been a professional examination. They also had to be engaged in pedagogical activities. The center of gravity of postgraduate education was always inclined to Economics, as a result of which a number of articles have been published and thesis was written by a postgraduate student. Nevertheless, the scope of academic freedom in post graduating study is larger (see figure 2), then in previous levels of professional education, as in masters and bachelors.




Figure 2. The Specific Tools in Post Graduating Study Organizational System¹⁹

In this regard, postgraduate economic studies in our Republic has a great problem, as Bergen communiqué proposed a three-degree system adding Doctorate to Bachelor's and Master's programs. Moreover, at the third stage the participants are considered both as students and researchers, the normal educational load was 3 years. Doctorate level qualifications should fully comply with European Higher Education Area (EHEA) qualifications framework.

Therefore, postgraduate economic academic programs/ implemented in our Universities/ currently need to be seriously reformed. For this purpose new educational blocks typical of researcher's training should be proposed, such technologies should be introduced as participation in scientific conferences, organization of debate clubs, active pedagogical activities.

In addition, the rules for applying to researcher's academic degree should be clarified. Postgraduate admission exams, which, frankly speaking, do not have anything in common with a certain profession, should be replaced with necessary minimum academic credits accumulated by a researcher at previous educational levels.

It is also necessary to simplify the process of thesis defence completing a researcher's academic program, and degree awarding process, the

¹⁹ Composed by authors

centralized regulation of which by RA Higher Attestation Commission, now becomes ineffective.²⁰ Actually postgraduate education sphere should be seriously reformed through making corrections in the list of economic professions, academic programs, making them in concord with ENEA standards.

Ришма Р.В.

Калифорнийский гос. университет

Срапян Н. Н.

Заведующий отделом международных связей Северного
университета Армении

Джугурян А.Г.

д.э.н., проф. Северного университета Армении

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В АСПИРАНТУРЕ

Ключевые слова: Болонский процесс, студенто – ориентированное обучение, докторантура, зальцбургские принципы поствузовского образования

Болонский процесс внес свои коррективы на третьем уровне профессионального образования. Ныне аспирантура постепенно представляется не как сугубо научно - исследовательский процесс, но и как обучение, требующее накопление академических кредитов. В статье, рассматриваются проблемы трансформации аспирантуры в докторантуру, тем самым, обосновывая применение студенто – ориентированных методов обучения экономистов и необходимость гармонизации образовательных услуг по стандартам Болонского процесса.

²⁰ Erichyan S. Tshuguryan A., Academic Freedom and SelfGovernance Issues. monography (in Armenian), «Edt Print», Yerevan, 2009, page 97

Ռիչմա. Ռ.Վ.
Կալիֆորնիայի պետական համալսարան
Մրապյան Ն.Ն
Հյուսիսային համալսարանի միջազգային կապերի բաժնի պետ
Ճուղուրյան Ա. Գ
Հյուսիսային համալսարանի պրոֆ., տ.գ.դ.

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ

Բանալի բառեր. Բոլոնիայի գործընթաց, ուսանողակենտրոն ուսուցում, դոկտորանտուրա, հետբուհական կրթության Զալցբուրգյան սկզբունքներ

Բոլոնիայի գործընթացը իր ճշգրտումները մտցրեց մասնագիտական կրթության երրորդ մակարդակում: Ներկայումս, ասպիրանտուրան աստիճանաբար դիտարկվում է ոչ թե զուտ գիտահետազոտական գործընթաց, այլ նաև որպես կրթություն, որը պահանջում է ակադեմիական կրեդիտների կուտակում: Հոդվածում քննարկվում են ասպիրանտուրայից դոկտորանտուրային անցման կազմակերպչական հիմնախնդիրները, հիմնավորելով տնտեսագիտական կրթական համակարգում ուսանողակենտրոն ուսուցման մեթոդները և Բոլոնիայի գործընթացին համահունչ կրթական ծառայությունների մատուցումը:

Խաչատրյան Ն.Ն.

ԵՊՀ դոցենտ, տ.գ.թ.

nonka_J@yandex.ru

Աբեսաձե Ն. Ս.

Թբիլիսիի պետական համալսարան, տ.գ.թ.

abesadze@mail.ru

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԸ

Բանալի բառեր. Բոլոնիայի գործընթաց, ակադեմիական կրեդիտներ, կրթական ծախսերի օպտիմալացում, ուսանողական շարժունություն

Կրթական բարեփոխումների ընթացքը պայմանավորված է աշխատուժի շուկայում, ինչպես նաև համալսարանական միջավայրում տեղի ունեցող հարաշարժ փոփոխություններով: Ներկայումս ձևավորվել է մի իրավիճակ, երբ բարձրագույն կրթությամբ շրջանավարտների մասնագիտական հմտություններն ու կարողությունները արագորեն «հնանում են» և չեն բավարարում գործատուների պահանջներին: Համալսարանական ավանդական կրթությունը, որն առնվազն չորս տարով է իրականացվում, խնդիր ունի ժամանակին արձագանքելու գիտելիքահենք տնտեսության առաջընթացի պահանջների բավարարմանը: Հետևաբար, ավանդաբար «էլիտար» համարվող համալսարանական կրթությունը զարգացած երկրներում հետզհետե ընդգրկում է ակադեմիական ճկուն համակարգեր, մեծացնելով կրթական ծառայությունների գրավչության աստիճանը, հնարավորություն ստեղծելով անհատի մեջ զարգացնելու ինչպես կարիերայի ձևավորման ուղիների բազմազանություն, այնպես էլ մրցակցային աշխատաշուկայում արագ կոդմնորոշվելու և վերապատրաստվելու ունակություն: Այդ ամենն իրականացվում է շարունակական կրթության համակարգի կիրարկման պայմաններում:²¹

²¹ Եվրոպական համալսարանների ընկերակցության պաշտոնական կայք <http://www.eua.be/eua-work-and-policy-area>, դիտվել է 01,03,2014


Եվրոպայում առկա համալսարանական մշակույթը հուշում է, որ բարձրագույն կրթությունը վաղուց դադարել է «էլիտար» լինելուց: Արևմուտքում հասարակական ձեռքբերում է համարվում ոչ միայն որակյալ համալսարաններ ունենալը, այլև թրեյնինգ կենտրոնների, վերապատրաստման դպրոցների լայն ցանցի օգնությամբ մասնագիտական կրթության մասսայականացումը: Եվ պատահական չէ, որ վերջին տասնամյակում իր զարգացումն ապրող Բոլոնիայի գործընթացի մի շարք փաստաթղթերում խնդիր է դրվում, որ բուհերը իրենց ավանդական ուսումնական ծրագրերի վերամշակման ընթացքում առաջնություն տան շարունակական կրթության, և այս հիմնահարցը համարեն հաստատությունների ռազմավարական զարգացման կենտրոնական, էական տարրերից մեկը: Սակայն անգամ համալսարանական հարուստ ավանդույթներ ունեցող եվրոպական երկրներում համակարգված շարունակական կրթությունը դժվարությունների է հանդիպում:

Շարունակական կրթության համակարգային կիրառման հիմնական խոչընդոտը տարբեր ուսումնական հաստատությունների միջև փոխվստահության պակասն է՝ որակյալ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացում: Շարունակական կրթությունը հիմնականում երկու առաքելություն ունի: Առաջին, երբ վերապատրաստում է անհատին աշխատաշուկայի կողմից առաջադրվող նոր պահանջներին համապատասխան (երբեմն այն համարում են նաև «մեծահասակների կրթություն») և երկրորդ, որը ոչ պակաս կարևոր է, նպաստում է մասնագիտական կրթության հաջորդականության գործընթացին:

Փորձը ցույց է տալիս, որ առավել արդյունավետ է գործում շարունակական կրթության առաջին առաքելությունը, երբ մասնագետը մասնակցում է կարճաժամկետ որակավորման դասընթացների (թրեյնինգների): Գործատուները այս դեպքում նույնպես շահագրգիռ են առավել կարճատև և էժանագին ծրագրերի արդյունքում որակավորված աշխատուժ ունենալու: ²² Դրան հա-

²² Synergies for Better Learning: An International Perspective on Evaluation and Assessment (2013), <http://dx.doi.org/10.1787/9789264190658-en>, դիտվել է 05.03.2014

կառակ, դեռևս դանդաղում է շարունակական կրթության ներդրումը՝ կրթության հաջորդականությունն ապահովող և բարձրագույն մասնագիտություն ստացող ուսանողի անհատական հետազիծը ձևավորող իր գործառույթներով: Պատճառը նախորդող կրթության համակարգում կուտակված կրեդիտների փոխձանաչումն է և կրթական հաստատությունների միջև փոխվստահության բացակայությունը: Շարունակական կրթության համակարգը, մասնագետների պատրաստման հաջորդականության փուլերով, ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման «երթուղիները» շարունակական կրթության համակարգում²³

ՀՀ-ում շարունակական կրթությունը, որպես մասնագետի որակավորման գործառույթ, կիրառվում է հիմնականում 1-ին և 4-րդ «երթուղով», երբ հանրակրթական դպրոցի շրջանավարտը ընդունվում է համալսարան, սովորելու ընթացքում կուտակում ակադեմիական կրեդիտներ, ստանում բակալավրի և այնուհետև՝ մագիստրոսի կրթական աստիճան: Փաստորեն, կրթական փուլերի նման հաջորդականությունը չի ենթադրում ուսումնառության ընթացքում կուտակված կրեդիտների փոխանցում և փոխձանաչում: Նման իրավիճակում որոշակիորեն խաթարվում

²³ Կազմված է հեղինակի կողմից:

է անհատի ուսումնառության ակադեմիական ճկունությունը, քանի որ յուրաքանչյուր համալսարան յուրովի «մեկուսանալով» կրեդիտների կուտակման գործընթացում՝ ճանաչում է միայն «սեփական կրթական ծառայությունների» արդյունքը:²⁴

ՀՀ-ում գործող համալսարանները նույնիսկ դժվարությամբ են ընդունում նախորդ կրթության, այսինքն մասնագիտական քոլեջների արդյունքները, երբ միջին մասնագիտությամբ շրջանավարտը, դիմելով բուհ դառնում է համալսարանի ուսանող (գծապատկեր 1-ի 2-րդ և 3-րդ «երթուղիները»): Նման իրավիճակը խիստ մտահոգիչ է, քանի որ այն չի նպաստում ուսանողների շարժունությամբ, կարիերայի ձևավորման ուղիների բազմազանությամբ, ուսումնական հաստատությունների փոխհամագործակցությամբ, կրթական շուկայում բուհերի մրցունակության բարձրացմանը:

Ի վերջո, ինչպիսի՞ն կլինեն շարունակական կրթական համակարգի ներդրման հետևանքները:

Առաջին. ՀՀ բուհերը հիմնականում կրթական ծրագրեր են իրականացնում, երբեմն հետին պլան թողնելով գիտահետազոտական գործունեությունը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում այլընտրանքային կրթական համակարգերից կուտակված ակադեմիական կրեդիտների ստացման ճանապարհով փոքր-ինչ «բեռնաթափել» բուհերի կողմից մատուցվող ուսումնական ծառայությունները՝ դրանք փոխարինելով գիտահետազոտական աշխատանքներով:

Երկրորդ. շարունակական կրթության շրջանակներում համալսարանների և այլ ուսումնական հաստատությունների գործընկերային հարաբերությունները ձևավորում են կրթության որակի ապահովման մշակույթ: Ուսումնական հաստատությունների միջև «շրջանառվող ակադեմիական կրեդիտները» կազմավորվում են կրթական պետական չափորոշիչների հենքով, և այդ գործընթացը փոխադարձաբար վերահսկվում է շարունակական կրթության շղթայի յուրաքանչյուր օղակի կողմից:

²⁴ Երիցյան Ս, Ճուղուրյան Ա., Ակադեմիական ազատություններ, «Էդիտ Պրինտ», Եր., 2009 թ., էջ 64

Երրորդ. շարունակական կրթության շնորհիվ մեծանում է բուհերի գրավչության աստիճանը ուսանողության համար: Ակադեմիական գործընթացը դառնում է առավել ճկուն, ուսանողներին հնարավորություն է ընձեռվում որոշակի չափաբաժնով անհատական մոտեցում ցուցաբերելու ուսում-նական պլանների ձևավորման գործընթացում՝ համակցելով համալսարանական և արտահամալսարանական կրթությունը, պլանավորելու նախա-ձեռնվող ուսումնառության ժամանակահատվածը:

Եվ, վերջապես, շարունակական կրթության իրականացման ճանապարհով իջնում է ուսումնական ծառայությունների մատուցման ինքնարժեքը, և կրճատվում է համալսարանական ուսման տևողությունը: Կրթական ծառայությունների մատուցումը համալսարաններում առավել թանկ է նստում հասարակության վրա, ուստի համակարգված շարունակական կրթության ներդրման արդյունքում կատարվում է ուսումնական գործընթացների ծախսատարության կրճատում՝ ի հաշիվ այլընտրանքային ուսումնառության ընդլայնման:

Хачатрян Нона

кандидат экономических наук, доцент ЕГУ

Нино Абесадзе

Тбилисский гос. университет, к.э.н

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ МОТИВАЦИИ НЕПРЕРЫВНОГО ОБУЧЕНИЯ

Ключевые слова: Болонский процесс, академические кредиты, оптимизация расходов на обучение, мобильность студентов

«Образование в течении жизни» выступает не только как инструмент совершенствования профессиональных навыков личности, но и играет важную роль в повышении социально-экономических условий в стране. В статье обсуждаются вопросы влияния «образования в течении жизни» на оптимизацию процессов формирования образова-

тельных расходов, а также гибкие пути эффективной организации профессионального образования.

Nonna Khachatryan

Ph.d in economics,
assistant professor at the Yerevan State University

Nino Abesadze

Ph.d in economics,
Tbilisi State University

SOCIAL ECONOMIC MOTIVATIONS OF LONG LIFE LEARNING

Key words: Bologna process, academic credits, optimization of education expenses, student mobility

Long Life learning is not only educational tool for enhancement personality professional skills, but also important factor for improving social economy conditions in country. In article is discussed influence of long life learning on process of educational expenses formation process optimization and effective ways for implementation flexible professional educational tools.

Խալաթյան Հ.Ա.

Հյուսիսային համալսարանի դասախոս
harutyun.khalatyan@gmail.com

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՂԹԱՆԵՐԸ

Բանալի բաներ. Տնտեսության նորագույն ճյուղեր, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ, աշխարհագրական նախա-դրյալներ

Վերջին երկու տասնամյակներում փոխվել են ՀՀ տնտեսության ճյուղերի զարգացման ու ձևավորման աշխարհագրական նախադրյալները: Դրանք պայմանավորված են որակյալ և էժան աշխատուժով, հզոր սփյուռքի առկայությամբ, միջազգային շուկայում տեղեկատվական և նանոտեխնոլոգիաների մեծ պահանջարկով, ոլորտի զարգացման պետական աջակցությամբ, տնտեսության կառուցվածքային փոփոխություններով: Առկա է տնտեսության նորագույն ճյուղերի գերկենտրոնացում, ռեգիոնալ անհամաչափ զարգացում:

XX դարի երկրորդ կեսում տեղի ունեցած գիտատեխնիկական հեղափոխությունն (ԳՏՀ) արմատական, որակական հեղաշրջում կատարեց արտադրողական ուժերի ճյուղային և տարածքային կառուցվածքում: Ըստ այդմ, տնտեսության ճյուղային կառուցվածքում ոչ միայն ի հայտ եկան նորագույն ճյուղեր, այլև արմատապես վերարժևորվեցին վերջիններիս աշխարհագրական տեղաբաշխման նախադրյալները:

Քննարկելով Հայաստանում տնտեսության նորագույն ճյուղերի զարգացման աշխարհագրական ժամանակակից նախադրյալները, պետք է փաստել, որ Հայաստանը տարածաշրջանում միշտ զբաղեցրել է առաջատար դիրք բարձր տեխնոլոգիաների հետազոտության, մշակումների և արտադրության ոլորտում:

Քանի որ ոլորտի զարգացման աշխարհագրական գլխավոր նախադրյալը՝ պահանջարկն էր որակյալ աշխատուժի նկատմամբ, ապա նրա աշխարհագրական տեղաբաշխումն աչքի էր ընկնում գերկենտրոնացվածությամբ:

Հիմնականում առանձնանում էր Երևանի արդյունաբերական հանգույցը՝ Աշտարակ, Աբովյան արդյունաբերական կետերով և մասամբ նաև՝ Գյումրին²⁵:

²⁵ Ոլորտի առաջատարներից էին Երևանի «Տրանզիստոր» կիսահաղորդիչների գիտաարտադրական գործարանը, միկրոէլեկտրոնիկայի, գիտահետազոտության և տեխնոլոգիաների ինստիտուտը, Կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտը «Մարս» Ինտեգրալ միկրոսխեմաների և էլեկտրոնիկայի գործարանը, Աբովյանի «Սիբիրուս» ռադիոէլեկտրոնային բաղադրիչներ արտադրող, Աշտարակի կիսահաղորդիչների և էլեկտրոնի-

Անկախությունից հետո ոլորտի ճյուղային կառուցվածքում նկատվեցին փոփոխություններ, որը պայմանավորված էր ոլորտի զարգացման աշխարհագրական նախադրյալների վերաբերմամբ: Մասնավորապես՝ նախկինում ոլորտի մասնագիտացման վրա ազդող գլխավոր գործոնը ԽՍՀՄ միասնական շուկայի պահանջներն էին, որի հսկայական ռազմաարդյունաբերական համալիրի պահանջով Հայաստանում իրականացվում էր խոշորածավալ արտադրական և գիտահետազոտական աշխատանքներ:

Միասնական շուկայի և նախկին արտադրատնտեսական կապերի քայքայումը, ինչպես նաև անհատական օգտագործման համակարգիչների (PC) դարաշրջանի սկիզբը պատճառ հանդիսացան, որ ոլորտի մասնագիտացման աշխարհագրական նախադրյալները վերափոխվեն: Վերջիններիցս առաջնային նշանակություն ձեռք բերեց ժամանակակից շուկայական պահանջարկը, որի արդյունքում ոլորտի ուղղվածությունը փոխվեց դեպի ծրագրային ապահովման մշակում, արտապատվիրում և SS ծառայություններ:

Ըստ՝ «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, հետազոտության արդյունքներ» ամփոփ աշխատության, 1991-2013 թվականների ընթացքում ծրագրային ապահովման և ծառայությունների սեգմենտն արձանագրել է լուրջ աճի տեմպեր՝ ապահովելով 27% տարեկան աճ²⁶:

Նման բարձր տնտեսական աճի համար առկա աշխարհագրական նախադրյալները կարելի է խմբավորել ներքոհիշյալ կետերում՝

կայի արտադրման և Գյումրու միկրոէլեկտրական սարքավորումների գործարանները: Տե՛ս Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, հետազոտության արդյունքներ, -Ե., 2011, էջ 8-9

²⁶ Տե՛ս, Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, հետազոտության արդյունքներ, -Ե., 2011, էջ 26

1. Որակյալ և էժան աշխատուժի առկայություն: Մասնագետների դիտարկմամբ, այսօր Հայաստանում առկա է համաշխարհային չափանիշներին համապատասխանող գիտահետազոտական հզոր ներուժ, որի ապահովման գործում մեծ է տեղեկատվական տեխնոլոգիաների և հարակից այլ մասնագիտացումներով ԲՈՒՀ-ական հիմնարար ծրագրերի դերը: Միաժամանակ, պետք է փաստել, որ առկա սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով մեր որակյալ աշխատուժը համեմատության մեջ բավականին էժան է: Հետևաբար, այս գործոնը լուրջ հիմք է հանդիսանում արտասահմանյան կապիտալի ներհոսքի համար:

2. Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում հզոր և ոլորտում հաջողակ սփյուռքի առկայություն: Սփյուռքը կարևորագույն դերակատարություն է ունեցել անկախ Հայաստանում ծրագրավորման ոլորտի կայացման գործում և փաստորեն հանդիսացել է այն հիմնական գործոնը, որի շնորհիվ Հայաստանում բավականին վաղ շրջանում հիմնվեցին արտասահմանյան բազմաթիվ ընկերություններ: Ապագայում այս գործոնը նույնպես կարող է ոլորտի զարգացման համար լուրջ խթան հանդիսանալ:

3. Միջազգային շուկայում ընդգրկուն պահանջարկ: Այս ոլորտը հանդիսանում է համաշխարհային հասարակության զարգացման հիմնական ուղղորդիչներից մեկը: Համաշխարհային տնտեսության զարգացման համատեքստում ոլորտի արտադրանքի նկատմամբ պահանջարկն ըստ էության անընդհատ է և շարունակաբար աճելու է:

4. Ոլորտի զարգացման պետական աջակցություն: Ոլորտը հայտարարվել է ՀՀ տնտեսության զարգացման ռազմավարական ուղղություններից մեկը և դիտարկվում է տնտեսության դիվերսիֆիկացման գլխավոր ուղղությունը: Պետության կողմից անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմների ապահովումն ապագայում դառնալու է ոլորտի ինտենսիվ զարգացման համար կարևոր նախապայման:

Այսպիսով, ՀՀ տնտեսության ժամանակակից կառուցվածքում, նորագույն ճյուղերի ոլորտը հիմնականում ներկայացված է տեղեկատվական տեխնոլոգիաներով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը հանդիսանում է և ապագայում շարունակելու է հանդիսանալ ՀՀ տնտեսության զարգացման կարևորագույն և դինամիկ զարգացող ուղղություններից մեկը, ինչի շնորհիվ հնարավոր է ապահովել նաև տնտեսության դիվերսիֆիկացման խիստ կարևոր խնդրի լուծումը: Սակայն, պետք է նկատել մեկ կարևոր հանգամանք՝ նաև ոլորտի զարգացման աշխարհագրական առանձնահատկությունների պատճառով այն աչքի է ընկնում գերկենտրոնացվածությամբ: Հետևաբար, հանրապետությունում հասարակական կապիտալի գերկենտրոնացվածության ֆոնին այն կարող է խորացնել տարածքային խիստ անհամաչափ զարգացման միտումները: Այս տեսանկյունից, անհրաժեշտություն է դառնում ոլորտի ապակենտրոնացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որը կարող է արտահայտվել ոլորտի համար ազատ տնտեսական գոտիների և տեխնոպարկերի ձևավորմամբ: Նկատենք նաև, որ այս ուղղությամբ քայլեր արդեն ձեռնարկվում են՝ Դիլիջանի ֆինանսական կենտրոնի, Գյումրիում գործող, Վանաձորում և Ստեփանակերտում նախատեսվող տեխնոպարկերի շնորհիվ:

ՀՀ տնտեսության նորագույն ճյուղերի ձևավորման համար կան բարենպաստ աշխարհագրական գործոններ՝ ազգաբնակչության գիտակրթական ներուժի համեմատական բարձր մակարդակը, ինչպես նաև տարածքային, բնական պաշարների և տրանսպորտային ուղիների սահմանափակումները: ՀՀ-ն ունի օբյեկտիվ մի շարք էական մրցակցային սահմանափակումներ, այդ թվում, օրինակ՝ նավահանգիստների բացակայությունը, փակ սահմանները հարևան չորս երկրներից երկուսի հետ, բարձր տրանսպորտային ծախսերը:

2000թ. ՀՀ կառավարությունը տեղեկատվական և հեռահաղորդակցության ոլորտը հայտարարեց երկրի տնտեսության

զարգացման ռազմավարական ուղղություն և մշակեց դրա գերակա զարգացման ծրագրեր²⁷:

Առաջատար տեխնոլոգիաների բնագավառում ՀՀ-ում արդյունավետորեն իրականացվում են հետազոտություններ նանոգիտության և նանոտեխնոլոգիաների, կենսատեխնոլոգիաների, լազերային տեխնոլոգիաների ուղղությամբ:

Վերջին տասնամյակների ընթացքում պարզ է դարձել, որ տեղեկատվական կապի և հաշվողական համակարգերի օրեցօր աճող պահանջները՝ նրանց հիշողության ծավալի, ազդանշանների վերամշակման և հաղորդման արագության մեծացման ուղղությամբ, կարելի է բավարարել միայն նանոգիտության և նանոտեխնոլոգիաների օգնությամբ: Նանոկառույցները միանգամայն ակտիվորեն ուսումնասիրվում են գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում: Ձևավորվել են այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են նանոէլեկտրոնիկան, նանոօպտիկան և նանոքիմիան: Ժամանակակից կիրառական ֆիզիկայի ամենակարևոր խնդիրներից մեկը տեսանելի և ինֆրակարմիր տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների տեղադրումն է նանոչափական բնագավառներում:

Առաջատար տեխնոլոգիաների մեջ իրենց զարգացման տեմպերով, ինչպես նաև տնտեսության և հասարակության վրա ունեցած ազդեցությունով առանձնանում են տեղեկատվական տեխնոլոգիաները: Այդ ոլորտն իրենից ներկայացնում է տեղեկատվություն հավաքող, ձևավորող, տարածող և օգտագործող սուբյեկտների, տեղեկատվության և տեղեկատվական ենթահամակարգերի ամբողջություն:

Հատկանշական է համագործակցությունը «Մայքրոսոֆթ», «Դ-Լինկ», «Նեյշնլ Բնաթրումենթս», «Մինոփսիս», «Մեն-թոր Գրաֆիքս», «Նոկիա», «Բնթել», «Միսկո», «ԱյԲիԷմ», «ԶիԷֆԱյ» և այլ առաջատար անդրազգային ընկերությունների հետ: Ուշագրավ

²⁷ <http://Armsoul.com/index.php?topic=925.0>

ձեռքբերում է համարվում նաև այն, որ հայկական «Արմթաբը» սկսել է պլանշետների արտադրել Armtab Techno-logies ընկերությունում:

Khalatyan H.A.

Lecturer at Northern University

THE GEOGRAPHICAL PREREQUISITES OF FORMATION AND DEVELOPMENT OF THE NEWEST SECTORS OF ECONOMY IN RA

Key words: The newest sectors in economy, information technologies, nanotechnologies, geographical prerequisites

After RA independence some changes in the structure of the newest branches of economy were observed which were due to the appreciation of the development of geographical prerequisites. The field of advanced technology for the development and formation of the newest sectors of economy is analysed in this article, where researches on nanoscience, nanotechnologies, biotechnology and laser technology are conducted. For the formation of the modern sectors of the economy favorable geographical factors, relatively high level of the people's educational potential as well as the limitations of the territorial, natural resources, and transportation routes are favorable. The sphere has state development support due to which it is announced to be one of the strategic directions of the economic development in RA.

Халатян А.А

Лектор Северного университета.

ГЕОГРАФИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ОРГАНИЗАЦИИ И РАЗВИТИЯ НОВЕЙШИХ ОТРАСЛЕЙ ЭКОНОМИКИ РА

Ключевые слова: Новейшие отрасли экономики, информационные техно-логии, нанотехнологии, географические предпосылки

После независимости РА в структуре новейших отраслей экономики замечены изменения, которые связаны с развитием в сфере переоценки географических предпосылок. Для формирования и развития новейших отраслей экономики в статье анализируются сферы передовых технологий, где сбываются исследования по направлениям нанонауки, нанотехнологий, биотехнологий, лазерных технологий. Для формирования новейших отраслей экономики РА существенное значение имеют благоприятные географические факторы: сравнительно высокий уровень научно-образовательного потенциала населения, а также ограничения территориальных, природных ресурсов и транспортных путей. Эта сфера имеет также государственную поддержку развития, благодаря чему объявлен один из стратегических путей развития экономики РА.

Մարգարյան Էդ., Հ.

ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի ամբիոնի ասիստենտ,
տնտեսագիտության թեկնածու
ed_marzpanyan@yahoo.com

ԻՆՉՊԵՍ ՀԱՄԱՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԳՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱՎՆԵՐԸ

Բանալի բաներ. համադրումներ իրական հիմքով, գնողունակության համարժեքություն, գների մակարդակի ինդեքս, փաստացի սպառողական ծախսեր

Հայաստանի և Վրաստանի տնտեսական վիճակների համեմատությունը, լինի դա կենցաղային, թե գիտագործնական մակարդակում, առանձնահատուկ հետաքրքրություն ներկայացնող հարց է: Այդուհանդերձ, այն հազվադեպ է մեկնաբանվում փաստական նյութի պատշաճ վերլուծությամբ՝ առավել հաճախ մատուցվելով պարզունակ, առօրեական դատողությունների շրջանակում: Իսկ այս դեպքում գրեթե անխուսափելի են հիմնավորա-

պես չփաստարկված, ոչ իրատեսական մտահանգումները, քանի որ տնտեսական իրողությունների դրսևորման ձևերն ու դրանց էությունը որպես կանոն միմյանց հետ չեն համընկնում:

Վերջին տարիներին Համաշխարհային Բանկը միջազգային փորձագետների ներգրավմամբ իրականացրել է Վրաստան-Հայաստան երկկողմ համադրումների լայնածավալ ծրագիր²⁸, որի արդյունքում դուրս են բերվել բազմապիսի համադրելի ցուցանիշներ, ինչը հարուստ էմպիրիկ նյութ է հիմնավոր վերլուծությունների, մեկնաբանությունների ու եզրահանգումների համար: Հասկանալի է, որ միջազգային համադրումների ժամանակակից մեթոդաբանության²⁹ կիրառմամբ ստացված արդյունքները, որոնք անշուշտ ունեն հավաստիության բարձր աստիճան, ոչ միշտ են համընկնում բնակչության լայն շերտերի շրջանում արմատացած պատկերացումների հետ:

Տարբեր երկրների մակրոտնտեսական ցուցանիշների համեմատության ժամանակ անհրաժեշտ է գնահատել այդ երկրներում ձևավորված գների մակարդակներն այնպես, որ նրանց ՀՆԱ-ները և հիմնական ծախսերի բաղադրիչները համադրվեն «իրական հիմքով»: Սա պարզապես նշանակում է, որ համեմատվում են երկու երկրներում սպառված ապրանքների ու ծառայությունների փաստացի ծավալները: Ինչպես որ միմյանց հաջորդող տարիների համար չեզոքացվում են գների փոփոխությունները երկրի իրական ՀՆԱ-ի աճը հաշվարկելիս, ճիշտ այդպես էլ պետք է չեզոքացվեն երկրների միջև գոյություն ունեցող գների տարբերությունները ժամանակի տվյալ պահին՝ նրանց իրական ՀՆԱ-ների համեմատություն իրականացնելիս:

²⁸ Ավելի մանրամասն տեղեկատվության համար տե՛ս http://siteresources.worldbank.org/ICPEXT/Resources/ICP_2011.html կայքէջը:

²⁹ *Eurostat-OECD Methodological Manual on Purchasing Power Parities, 2012 edition*, Eurostat and OECD, Luxembourg 2012.

Աղյուսակ 1³⁰.

Ինչպես են ԳՈԻՀ-երն օգտագործվում իրական
ծախսերն ստանալու համար

	Անվանական ծախսեր				Գների համակցություն (գնողունակության համարժեքություն)		Իրական ծախսերի համակցություններ	
	Հա- յաս- տան	Վը- րաս- տան	Ծախսերի հա- մակցություններ					
	Մլն դրամ	Մլն լարի	ARM=1	GEO=1	AMD=1	GEL=1	ARM= 100	GEO =100
	(1)	(2)	(3) (2)/(1)	(4) (1)/(2)	(5)	(6)	(7)= [(3)/ (5)] x 100	(8) = [(4)/ (6)] x 100
Մենդա- մթերք	1,738, 749	5,632	0,003239	308,73	0,004518	221,34	71,7	139,5
Ոչ ալկո- հոլային խմիչք- ներ	91,926	359	0,003905	256,06	0,004808	207,99	81,2	123,1
Ալկո- հոլային խմիչք- ներ	123, 14	618	0,004987	200,51	0, 005723	174,73	87,1	114,8

Այդ նպատակով հաշվարկվում է «տարածական» գների ինդեքս հետևյալ տրամաբանությամբ. Վրաստանում, որն է ապրանքային խմբի, ասենք՝ հացամթերքի գները հարաբերվում են Հայաստանում խմբի նույն ապրանքների գներին, ընդ որում՝ յուրաքանչյուր գին ներկայացվում է սեփական երկրի արժույթով՝ համապատասխանաբար՝ լարիով կամ դրամով: Այս միջերկրային

³⁰ Հոդվածում բերված աղյուսակների կազմման, երկու երկրների ՀՆԱ-ների ու դրանց ծախսային բաղադրիչների համադրման արդյունքների ներկայացման համար հիմք է հանդիսացել Համաշխարհային Բանկի փորձագետների պատրաստած «Վրաստանի և Հայաստանի իրական ՀՆԱ-ների համեմատություն» զեկույցը 2011թ. վիճակագրական տվյալների հիման վրա, ՀՀ ԱՎԾ, 2013. www.armstat.am:

գնային համակցությունները կամ անհատական գնողունակության համարժեքություններն (ԳՈԻՀ) այնուհետև միջինացվում են: Նախ՝ դրանք միջինացվում են միասեռ ապրանքային խմբերի շրջանակում՝ հիմնական ապրանքային խմբերի գծով ԳՈԻՀ-ը ստանալու համար: Այնուհետև միջինացվում են՝ օգտագործելով համախառն ՀՆԱ-ի մեջ ոչ միայն հացամթերքի, այլև՝ բոլոր այլ հիմնական ապրանքախմբերի ծախսերի մասնաբաժինները: Արդյունքում ստացվում է միջերկրային գների ընդհանուր ինդեքս:

Աղյուսակ 1-ը ցույց է տալիս, թե յուրաքանչյուր ապրանքախմբի գծով ԳՈԻՀ-երն ինչպես են օգտագործվում այդ երկրի արժույթով արտահայտված անվանական ծախսերը «արժենվազեցնելու» և իրական ծախսերը դուրս բերելու համար: Աղյուսակի (1) և (2) սյունակներում բերված են Հայաստանի և Վրաստանի ազգային հաշիվներով առանձնացված երեք ապրանքախմբի գծով կատարված փաստացի սպառողական ծախսերը: (3) և (4) սյունակները ցույց են տալիս երկրներում ծախսերի հարաբերակցությունը միմյանց նկատմամբ: Ընդ որում, բերվում է ծախսերի երկու համակցություն, քանի որ որպես բազիսային երկիր մի դեպքում կարող է ընդունվել Հայաստանը ($ARM=1$), իսկ մյուս դեպքում՝ Վրաստանը ($GEO=1$): Նկատենք, որ համաթվերից յուրաքանչյուրը մյուսի հակադարձ մեծությունն է, այսինքն՝ ($GEO=1$)-ը կարող է ստացվել որպես $1/(ARM=1)$: (5) և (6) սյունակներն արդեն ցույց կտան գնային համակցությունները կամ ԳՈԻՀ-երը: Դրանք ևս կարելի է ներկայացնել երկու եղանակով՝ կամ հայկական, կամ վրացական արժույթի հիմքով. մեկը կլինի մյուսի հակադարձ մեծությունը:

Վերջին երկու սյունակները ցույց են տալիս իրական ծախսերի համակցությունները, որոնք ստացվում են (1) և (2) սյունակների անվանական ծախսերի համակցությունները բաժանելով (5) և (6) սյունակների ԳՈԻՀ-երի վրա: Իրական ծախսերի համակցությունները նույնպես երկու խմբի են բաժանվում՝ կախված այն բանից, թե որ երկիրն է ընտրվում որպես բազիսային երկիր: (7) սյունակը ցույց է տալիս, որ երբ օրինակ՝ Հայաստանում սննդամթերքի գծով իրական ծախսերը հավասար են 100.0-ի,

Վրաստանում դրանք կկազմեն ընդամենը 72.0: (8) սյունակը ցույց է տալիս, որ երբ Վրաստանում այդ նույն ծախսերը հավասար են 100.0-ի, ապա Հայաստանում դրանք կկազմեն 138.9: Այլ կերպ ասած՝ Հայաստանում սննդամթերքի վրա իրական ծախսերը կայուն կերպով ավելի մեծ են, քան Վրաստանում: Նույն եզրակացությունը ճիշտ է նաև աղյուսակ 1-ում ներկայացված երկու մյուս ապրանքային խմբերի համար: Այստեղ խոսքը գնում է համախառն իրական ծախսերի մասին, որոնք իհարկե կարելի է արտահայտել նաև մեկ շնչի հաշվով՝ բաժանելով յուրաքանչ-յուր երկրի բնակչության թվի վրա:

Աղյուսակ 2.

Ինչպես հաշվարկել գների մակարդակի ինդեքսը (ԳՄԻ)

	Գնողունակության համարժեքություն (ԳՈԻՀ)		Փոխարժեք		Գների մակարդակի ինդեքս (ԳՄԻ)	
	AMD=1	GEL=1	AMD=1	GEL=1	ARM=100	GEO=100
	(1)	(2)	(3)	(4)	(5)= (1)/(3)	(6)= (2)/(4)
Սննդամթերք	0,004518	221,34	0,004526	220,932	99,8	100,2
Ոչ ակոհոլային խմիչքներ	0,004808	207,99	0,004526	220,932	106,2	94,1
Ալկոհոլային խմիչքներ	0,005723	174,73	0,004526	220,932	126,4	79,1

Գնային համակցությունները կամ ԳՈԻՀ-երը ազգային գների հարաբերակցություններն են՝ արտահայտված վրացական լարիով և հայկական դրամով: Հետևաբար ԳՈԻՀ-ը «նման» չէ ժամանակային գների ինդեքսներին, օրինակ՝ սպառողական գների ինդեքսին, որը հաշվարկվում է որպես միևնույն արժույթով արտահայտված գների հարաբերակցություն և բազիսային տարվա համար սովորաբար հավասար է 100-ի: ԳՈԻՀ-երն ավելի հստակ պատկերացնելու և կիրառելու նպատակով անհրա-

Ժեշտ է դրանք «նորմալացնել»՝ բաժանելով լարիի կամ դրամի փոխարժեքի վրա և բազմապատկել 100-ով: Կստացվեն գների մակարդակներում առկա տարբերությունները ներկայացնող համաթվեր, որոնց անվանում են «գների մակարդակի ինդեքսներ» (ԳՄԻ): Աղյուսակ 2-ում ներկայացված է, թե ինչպես կարելի է հաշվարկել ԳՄԻ-ները Աղյուսակ 1-ում բերված երեք ապրանքախմբի համար:

Աղյուսակ 2-ի (1) և (2) սյունակները ԳՌՀ-երն են՝ վերցված աղյուսակ 1-ից: (3) և (4) սյունակներում բերված են փոխարժեքները, համապատասխանաբար՝ լարիների քանակը, որ կարելի է գնել մեկ դրամով և դրամների քանակը, որ կարելի է գնել մեկ լարիով: (5) և (6) սյունակներում ներկայացված են ԳՄԻ-ները երեք ապրանքախմբի համար, համապատասխանաբար՝ Հայաստանում և Վրաստանում. վերջիններս ԳՌՀ-երն են՝ բաժանած փոխարժեքի վրա և բազմապատկած 100-ով:

Ինչպես վկայում են համադրման արդյունքում ստացված տվյալները, սննդամթերքը երկու երկրներում էլ ունի գների միևնույն մակարդակը, սակայն ոչ ալկոհոլային և ալկոհոլային խմիչքների գների մակարդակն ավելի բարձր է Վրաստանում:

Վրաստանի և Հայաստանի ՀՆԱ-ների ծախսային հիմնական բաղադրիչների երկկողմ համադրման արդյունքների հիման վրա ստացված մի շարք հետաքրքրաշարժ փաստեր ներկայացվում են ստորև³¹.

Վրաստանում սննդամթերքի գծով իրական ծախսերն ավելի քան երկու անգամ փոքր են, քան Հայաստանում: Սննդամթերք ասելով հասկացվում է խանութներից ձեռք բերված անմշակ կամ պատրաստի սննդամթերքը: Վրաստանաբնակներն ավելի քիչ են ծախսում սննդամթերքի վրա, բայց ավելի շատ են սպառում ռեստորանային ճաշատեսակներ: Վրաստանում հյուրանոցների և ռեստորանների գծով ծախսերը (մասնավորապես՝ ռեստորանային ծախսերը) կրկնակի անգամ ավելին են, քան Հայաստանում:

³¹ Աղբյուրները՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2012, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2013, Վրաստանի և Հայաստանի իրական ՀՆԱ-ների համեմատություն, ՀՀ ԱՎԾ, 2013. www.armstat.am:

Հայաստանում խմիչքների (թե՛ ալկոհոլային, թե՛ ոչ ալկոհոլային) վրա ծախսերն էապես ավելի մեծ են, քան Վրաստանում: Օրինակ, եթե Վրաստանի համաթիվն ընդունենք = 100-ի, ապա Հայաստանում մեկ շնչին ընկնող ծավալային ցուցանիշը ոչ ալկոհոլային խմիչքների գծով կկազմի 182.3: Ինչպես և սննդամթերքի դեպքում՝ վրաստանաբնակները հայաստանաբնակների համեմատ ամեն տեսակի խմիչքներ ավելի շատ սպառում են ռեստորաններում և բարերում:

Վրաստանաբնակները շուրջ 80 տոկոսով ավելի շատ ծխախոտ են սպառում, քան հայաստանաբնակները: Եթե Հայաստանում համաթիվն ընդունենք 100, ապա Վրաստանում մեկ շնչի հաշվով այն կկազմի 183.2: Եվ դա այն դեպքում, երբ Վրաստանում ծխախոտի գները 12 տոկոսով ավելի բարձր են:

Վրաստանում էապես ավելի մեծ են ծախսերը կացարանի կահավորման, սարքավորումների և վերանորոգման ծառայությունների, տրանսպորտի և հանգստի ու մշակույթի գծով, քան Հայաստանում, մինչդեռ Հայաստանում Վրաստանի համեմատ ավելի մեծ է հագուստեղենի, կոշիկեղենի և կապի ծառայությունների սպառումը:

Վրաստանում թե՛ առողջապահական և թե՛ կրթական ծառայությունների սպառումն ավելի մեծ է, քան Հայաստանում: Եթե Հայաստանի համաթիվն ընդունենք 100, ապա Վրաստանում մեկ շնչի հաշվով համաթիվերը կկազմեն համապատասխանաբար 115.1 և 108.8:

Ընդհանուր առմամբ երկու երկրներում գների մակարդակները գրեթե նույնն են, իսկ ԳՄԻ-երը մեկը մյուսից տարբերվում են մեծ մասամբ մինչև 10 տոկոսի չափով: Հիմնական բացառություններն են.

- Հայաստանում Վրաստանի համեմատ գների մակարդակն ավելի քան 10 տոկոսով ցածր է կաթնամթերքի, պանրի ու ձվի, ալկոհոլային խմիչքների, ծխախոտի և կրթական ծառայությունների գծով: Վրաստանում Հայաստանի համեմատ գների մակարդակն ավելի քան 10 տոկոսով ցածր է բ-

ուսական ու կենդանական յուղի, կապի ծառայությունների և մեքենասարքավորումների գծով:

- Վրաստանում փաստացի կոլեկտիվ սպառման գների մակարդակը 10 տոկոսով ավելի բարձր է: Սա ներառում է կառավարության ծախսերը ընդհանուր հանրային ծառայությունների, երկրի պաշտպանության, հասարակական կարգուկանոնի և անվտանգության, տնտեսական ոլորտի, շրջակա միջավայրի պաշտպանության, բնակարանային շինարարության և համայնքների կառուցապատման համար: Վրաստանում գների մակարդակն ավելի բարձր է, որովհետև գործունեության նշված ոլորտների պետական աշխատողներն ավելի բարձր են վարձատրվում, քան նրանց հայ գործընկերները:

Տնային տնտեսությունների վերջնական սպառողական ծախսերի գծով մեկ շնչին ընկնող ծավալային ինդեքսները ցույց են տալիս, որ Հայաստանի տնային տնտեսությունները շուրջ 23 տոկոսով ավելի են ծախսում, քան Վրաստանինը: Մյուս կողմից, կառավարության անհատական սպառողական ծախսերը Հայաստանում որոշ չափով ավելի ցածր են, քան Վրաստանում. եթե Վրաստանում մեկ շնչին ընկնող ծավալի ինդեքսը = է 100-ի, ապա Հայաստանում՝ 84.0-ի: Այլ կերպ ասած, Վրաստանում տնային տնտեսությունները Հայաստանի համեմատ ավելի քիչ են ծախսում ապրանքների և ծառայությունների վրա, բայց նրանք ստանում են ավելի շատ անհատական ծառայություններ, ինչպիսիք են՝ պետական առողջապահական, կրթական, ռեկրեացիոն և մշակութային ծառայությունները:

Marzpanyan Ed. H.,
Assistant professor at YSU Finance and Accounting
Department, PhD in Economics

HOW TO COMPARE PRICE LEVELS OF ARMENIA AND GEORGIA

Key words: comparison on a real base, purchasing power parity, a price level index, the actual consumer expenses

Improvement of methodology of intercountry macroeconomic comparisons – an actual problem of modern statistics and financial accounting. The comparative analysis of the main macroeconomic indicators of Georgia and Armenia shows that now GNP indicator per capita in Georgia is on the same level with a similar indicator of Armenia. Overall price level in both countries is identical though there are some distinctions in a section of separate commodity groups.

Марзпаян Ед.А.,
Ассистент кафедры финансов и учета ЕГУ,
кандидат экономических наук

КАК СОПОСТАВИТЬ УРОВНИ ЦЕН АРМЕНИИ И ГРУЗИИ

Ключевые слова: Сопоставление на реальной основе, паритет покупательной способности, индекс уровня цен, фактические потребительские расходы

Совершенствование методологии межстрановых макроэкономических сопоставлений – актуальная задача современной статистики и финансового учета. Сравнительный анализ основных макроэкономических показателей Грузии и Армении показывает, что в настоящее время показатель ВВП на душу населения в Грузии сравнился с аналогичным показателем Армении. Общий уровень цен в обеих странах одинакова, хотя имеются некоторые различия в разрезе отдельных товарных групп.

Պողոսյան Մ. Ռ.
Հյուսիսային համալսարանի տնտեսագիտության
և կառավարման ամբիոնի վարիչ
maga.am@mail.ru

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԿԱՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր. մարդկային կապիտալի սահմանումներ, մարդկային կապիտալում ներդրումներ, մարդկային կապիտալի բաղադրիչներ

Ժամանակակից տնտեսագիտությունը երկրի տնտեսական առաջընթացը պայմանավորում է մարդկային կապիտալի /human capital/ զարգացմամբ: Հետադյունաբերական հասարակության մեջ գլխավոր արտադրողական ուժը դառնում է մարդը, ուստի տնտեսական աճի ավանդական գործոնները՝ կապիտալի կուտակումը, բնակչության թվաքանակի աճը, ԳՏԱ-ը և աշխատանքի արտադրողականությունը պետք է դիտարկել նոր ձևով:

Մարդկային կապիտալի, որպես արտադրության գործոնի առանձնացումը կարևորվում է այն առումով, որ այն երկրներին տալիս է լրացուցիչ համեմատական առավելություններ, և երկրորդ, արտադրության մյուս գործոնների համեմատությամբ ունի ավելի բարձր արտադրողականություն: Մարդկային կապիտալի գաղափարը խոր արմատներ ունի տնտեսագիտական մտքի պատմության մեջ /Ու Պետի, Ա. Սմիթ, Ա. Մարշալ/: Վերջինս իր «Սկզբունքներում» արդեն բավականին մանրակրկտորեն նշում է այն գործոնները, որոնք հետագայում պիտի դառնան մարդկային կապիտալի բաղկացուցիչները: Մասնավորապես, նա ազգային հարստության աճը կապում է գիտելիքների և կազմակերպման հետ, մեծ նշանակություն վերագրելով նաև բնակչության կրթությանը, առողջությանը և ուժին: Սակայն որպես տնտեսագիտական մտքի առանձին վերլուծական բաժին՝ մարդկային կապիտալի տեսությունը ձևավորվել է 20-րդ դարի 50-60-ական թվականներին: Այս տեսության առաջարկման վաստակը պատկանում է ամերիկյան հայտնի տնտեսագետ Նոբելյան մրցանակի դափնեկիր Թ. Շուլցին, իսկ բազային տեսական մոդելը մշակվել է Նոբելյան մրցանակի դափնե-

կիր Գ. Բեկկերի «Մարդկային կապիտալ» գրքում /1964թ/: Որպես ամբողջական հայեցակարգ՝ մարդկային կապիտալի հիմնախդիրները հիմնական ուշադրությունը կենտրոնացնում են մարդկային կապիտալում ներդրումներին և նրանց արդյունավետության գնահատմանը: Մարդկային կապիտալի տեսության ներկայացուցիչների բազմաթիվ բնորոշումները հանգում են նրան, որ մարդիկ, իրենք իրենց մեջ ներդրումներ կատարելու միջոցով մեծացնում են իրենց արտադրողական և սպառողական ունակությունները՝ զգալիորեն փոփոխելով եկամուտների կառուցվածքը: Հետևաբար, մարդկային կապիտալն իրենից ներկայացնում է ոչ թե բնածին ունակությունները, այլ մարդու կուտակած հատկությունները, որոնք կարող են ձևավորվել յուրաքանչյուր անհատի կենսագործունեության ընթացքում: Բնածին հատկություններն, այս դեպքում, հանդես են գալիս միայն որպես մարդկային կապիտալի արդյունավետ ձևավորմանը նպաստող գործոններ:³²

Ռուսաստանի ռազմավարական զարգացման խնդիրներով զբաղվող մի խումբ գիտնականներ, Լ.Ի Աբալկինի գլխավորությամբ, մարդկային կապիտալը բնորոշում են որպես բնածին ընդունակությունների, ընդհանուր և մասնագիտական կրթության, ձեռք բերված մասնագիտական փորձի, ստեղծագործական պոտենցիալի, բարոյահոգեբանական և ֆիզիկական առողջության, գործունեության մոտիվների հանրագումար, որոնք ապահովում են եկամուտ բերելու հնարավորություն:³³ Այստեղից ելնելով, կարելի է պնդել, որ մարդկային կապիտալը ձևավորող գործունեության հիմնական ուղորդներն են գիտակրթական համակարգը, առողջապահությունը, անմիջականորեն կյանքի և կենցաղի պայմաններ ձևավորող ոլորտները:

Մարդկային կապիտալը կարելի է նաև բնորոշել որպես առողջության, գիտելիքների, ընդունակությունների, մշակույթի, փորձի կուտակված պաշար, որը նպատակաուղղված է ապրանքների և ծառայությունների արտադրությանը, մարդու, ձեռնարկության, հասարակության եկամուտների ավելացմանը:

³² Thurow L. Investment in Human Capital. Belmont, 1970, p.116-117.

³³ Стратегический ответ России На вызовы нового века /под ред. Л.И.Абалкина. М.: Изд-во «Экзамен». 2004,с. 21-22.

Մարդու՝ որպես կապիտալային արժեքի հիմնախնդիրը տեսական մի շարք հետազոտություններում քննարկվում է զուտ դրա բաղադրիչների վերլուծության մակարդակով, ընդ որում արևմտյան տնտեսագետները հայտնում են միմյանցից տարբեր կարծիքներ: Գ. Բեքերը կարևորում է կրթության կապիտալը, որի մեջ մտնում են ընդհանուր և մասնագիտական գիտելիքները, առողջության կապիտալը, մասնագիտական պատրաստվածության կապիտալը, որը ներառում է որակավորումը, հմտությունը, արտադրական փորձը, միգրացիայի կապիտալը, տնտեսապես նշանակալից տեղեկատվության տիրապետումը, տնտեսական գործունեության մոտիվացիան:³⁴

Լ.Թուրուն մարդկային կապիտալի բնութագրման համար կարևորում է հարգանքը քաղաքական և սոցիալական կայունության նկատմամբ և պնդում, որ քաղաքական և սոցիալական կայունությունը հնարավորություն է տալիս անհատի բազմակողմանի զարգացման համար ձևավորել առավել ընդունելի և բարենպաստ միջավայր:³⁵ Այլ հեղինակներ մարդկային կապիտալի զարգացման համար կարևորում են ակտիվությունը, պատասխանատվությունը, աշխատանքային կարգապահությունը, ընդհանուր կրթական և մշակութային մակարդակը:³⁶ Մեր կարծիքով, մարդկային կապիտալը ձևավորվում է նշված բոլոր բաղադրիչների հիման վրա, բազիսայինը, սակայն, նրանց մեջ հանդիսանում է մարդու առողջությունը և կենսական ակտիվությունը, որոնք էլ նախապայման են ստեղծում մյուս բոլոր բաղադրիչների զարգացման համար:

Մարդկային կապիտալի համասեռությունը կապիտալի մյուս տեսակներին, իհարկե, որոշ հարցերում վիճելի է: Որպես այս կապիտալների միջև տարբերության ապացույց, նախ և առաջ, բերվում է այն փաստը, թե ժամանակակից հասարակության մեջ, ի տարբերություն սարքավորման կամ արժեթղթերի փաթեթի, մարդը չի կարող առք ու վաճառքի առարկա լինել: Եվ որպես հետևանք, շուկայում սահմանվում է մարդկային կապիտալի միայն «վարձակալման» գինը՝ որպես աշխատավարձի մեծություն: Իսկ սա լրջորեն բար-

³⁴ Becker G.S. Human Capital: Theoretical. Empirical Analysis, N. Y. 1964, p. 16

³⁵ Thurow L. Investment in Human Capital. Belmont, 1970. p. 104.

³⁶ Марценкович В. И., Соболева И. В. Экономика человека. М., 1995, с. 14.

դացնում է վերլուծությունը: Ի հակադրություն վերը նշվածի՝ սպորտի բնագավառում կատարվում է լավագույն մարզիկների կապիտալի «վարձակալում»՝ մարզիկին տրվող աշխատավարձի ձևով, և, միևնույն ժամանակ, նույն կապիտալի «առք ու վաճառքի» գործարք, որն իրականացվում է մարզական ակումբների միջև /մարզիկի համար տրանսֆերային գնի վճարում/: Թերևս այս երևույթը բավականին նման է մարդկային կապիտալի լիզինգին՝ որպես մարզիկի մտավոր և ֆիզիկական ունակությունների վարձակալության: Մյուս կողմից մարզիկի սպորտային նվաճումները ինտելեկտուալ կամ մտավոր սեփականություն են հանդիսանում/Շահսուվարյան/:

Բովանդակային առումով մարդկային կապիտալը ներառում է առողջության, գիտելիքների, հմտությունների, ունակությունների պաշար, որոնք կապիտալացվում են որոշակի պայմաններում: Ա.Ն.Դոբրինինը և Ս.Ա. Դյատլովը, վերլուծելով մարդկային կապիտալի բովանդակությունը և կուտակման պայմանները, ընդհանրացրել են. «Մարդկային կապիտալը ներդրումների արդյունքում ձևավորված և մարդու կողմից կուտակված առողջության, գիտելիքների, հմտությունների, ունակությունների, մոտիվացիայի որոշակի պաշար է, որը նպատակահարմար կերպով օգտագործվում է հասարակական վերարտադրության այս կամ այն ոլորտում, նպաստում աշխատանքի արտադրողականության և արտադրության աճին, դրանով իսկ ազդելով սեփական եկամուտների աճին»:³⁷ Այս բնորոշմանը, թերևս, պետք է ավելացնել, որ մարդկային կապիտալի կիրառումը ավելացնում է ոչ միայն աշխատողի վաստակը, այլև ձեռնարկության և պետության եկամուտները:

Պետք է նշել, սակայն, որ մարդկային կապիտալում ներդրումների հետազոտությունները, ընդհանուր առմամբ, կատարվել են միակողմանի՝ հիմնական ուշադրությունը սևեռելով կրթությանն ու նախապատրաստմանը արտադրությանը, շատ քիչ ուշադրություն դարձնելով մարդկային կապիտալում, թերևս, առաջնային՝ առողջության պահպանման ներդրումներին: ՄԱԿ-ի տնտեսական հարցերով դեպարտամենտը մարդկային կապիտալի վրա կատարվող ներդրումները բնորոշում է որպես աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով կատարվող ներդրումներ՝ այս շարքում

³⁷ Дятлов С.А. Основы теории человеческого капитала. СПб.1994,с.83

մեծ տեղ առանձնացնելով առողջության և կյանքի ստանդարտների բարելամանը: Որպես առողջության պահպանմանն ու բարելավմանն ուղղված գործոն, կարծում ենք մեծ նշանակություն ունեն ներդրումները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում:

Մարդկային կապիտալի դասակարգումը հնարավոր է ըստ տարբեր չափանիշների և տարբեր նպատակներով: Արևմտյան գիտնականները, սովորաբար, այս դասակարգման հիմքում դնում են մարդկային կապիտալում ներդրումների տեսակները: Գ.Շուլցը ներդրումային գործունեության տեսակներին դասում է դպրոցական կրթությունը, ուսուցումը աշխատատեղում, առողջության ամրացումը, տնտեսական տեղեկատվության ավելացող պաշարը:³⁸ Գործունեության այս բոլոր տեսակները նպատակաուղղված են մարդկային ունակությունների որոշակի խմբերի ձևավորմանը, որոնք կարող են կոնկրետ կապիտալային գնահատական ստանալ և կիրառվել որպես մարդկային կապիտալ: Մ.Մ.Կրիտսկին առանձնացնում է մարդկային կապիտալի 3 հիմնական տեսակներ՝ արտադրողական(T), սպառողական(P) և ինտելեկտուալ(S):³⁹

Մարդկային կապիտալի դասակարգման վերարտադրողական մոտեցումը կարևորում է մարդկային կապիտալի մեծության ու ինտենսիվության գնահատումը՝ գործունեության որոշակի ոլորտներում: Ըստ այս մոտեցման մարդկային կապիտալի գնահատումը իրականացվում է ըստ հետևյալ բաղադրիչների.

1. առողջության կապիտալ,
2. աշխատանքային կապիտալ,
3. ինտելեկտուալ կապիտալ,
4. կազմակերպածեռնարկատիրական կապիտալ,
5. մշակութաբարոյական կապիտալ:

Այս դասակարգման մեջ **առողջության կապիտալը** /բիոֆիզիկական կապիտալ/ ենթադրում է Ֆիզիկական ուժը, դիմացկունությունը, հիվանդությունների նկատմամբ իմունիտետը, աշխատունակությունը, ակտիվ աշխատանքային գործունեության ժամանակաշրջանի ավելացումը, որոնք անհրաժեշտ են մարդուն մասնագի-

³⁸ Schultz T. Investment in Human Capital/ - the Role of Education and of Research. H.Y., 1971. P. 62

³⁹ Критский М.М. Человеческий капитал. Л.: Изд. Ленгос-та, 1991. С. 9.

տական գործունեության ցանկացած ոլորտում: Ինչպես նշում են շախմատի շատ գրոյսմաստերներ, այդ թվում և Ա. Կարպովը, Գ. Կասպարովը, տանջալի մատչերում հաղթանակը հաճախ տրվում է առավել դիմացկունին և ֆիզիկապես ուժեղին: Ցանկացած մասնագիտության համար էլ առողջությունը հանդիսանում է աշխատանքի արդյունավետության գործոն՝ վերածվելով կապիտալի:

Աշխատանքային կապիտալ. որքան բարդ է աշխատանքը, այնքան բարձր են որակավորման, հմտությունների և փորձի պահանջները: Պ. Դրուքերը նշում է.«Բիզնեսը կազմակերպում է, որի գոյության կամ փլուզման որոշիչ գործոնը հանդիսանում է աշխատակիցների որակավորումը...»: Աշխատանքային ունակությունները նույնպես կապիտալացվում են: Ըստ ակադեմիկոս Ս.Գ. Ստրումիլինի, որակավորված աշխատանքն իր արտադրողականությամբ գերազանցում է սովորական աշխատանքը 2-3 անգամ, համապատասխանաբար, տարիֆային ցանցով 2-3 անգամ բարձր վարձատրվելով: Որակավորման բարձրացմանն ուղղված ներդրումները և՛ աշխատողին, և ձեռնարկությանը հատույց են ապահովում: Իհարկե, այստեղ պահպանվում է աշխատուժի և մարդկային կապիտալի սահմանազատման խնդիրը: Սակայն որակավորման բարձրացումը և որակավորված աշխատանքի լրացուցիչ արտադրողական ուժը հենց կարող են վերածվել աշխատանքային կապիտալի՝ որպես մարդկային կապիտալի հատուկ տեսակ:

Ինտելեկտուալ կապիտալ. Ինտելեկտուալ կապիտալի առկայությունը հաճախ պայմանավորված է որոշակի տաղանդի զարգացմամբ՝ ստեղծագործական աշխատանքի միջոցով: Ինտելեկտուալ արդյունքը անջատվում է հեղինակից, պատենտավորվում է և ամրագրվում է հեղինակային իրավունքով, որպես հեղինակի բացառիկ սեփականություն, որը որոշում է իր սեփականության տեսական կիրառության ուղղություններն ու ձևերը: Ինտելեկտուալ սեփականության օբյեկտները ներառվում են տնտեսական շրջանառությունում որպես ձեռնարկությունների ոչ նյութական ակտիվներ: Ինտելեկտուալ կապիտալում ներդրումները ապահովում են գիտական հետազոտությունների զգալի քանակ, թեև պետք նշել որ գիտական հոտազոտություններով զբաղվածների թիվը վերջին տարիներին նվազել է:

Կազմակերպած ձեռնարկատիրական կապիտալ. Դեռևս 20-րդ դարի սկզբին Շումպետերը հիմնավորել է ձեռնարկատիրական, կազմակերպչական ունակությունների առանձնահատուկ նշանակությունը: Ձեռնարկատիրական ունակությունների կիրառումը բիզնեսում և կառավարման մեջ դառնում է մարդկային կապիտալի հատուկ տեսակ: Կազմակերպչական կամ նախաձեռնողական ունակություններ ցուցաբերած մարդիկ կարող են զարգացնել դրանք նպատակային ուսուցման և պրակտիկայի միջոցով: Բացառիկ իրավունքներ կուտակելով հողօգտագործման, ֆինանսական կապիտալի, այլ գույքի նկատմամբ, խորացնելով սեփական կազմակերպչական և կոմերցիոն հմտությունները ձեռնարկատերերը /մենեջերները/ ձևավորում են առանձնահատուկ՝ կազմակերպած ձեռքերցային կապիտալ:

Մշակութաբարոյական կապիտալ. Այսօր գործնական էթիկան և բարոյականությունը բացարձակ պահանջ է ցանկացած մասնագիտության աշխատողի համար: Կուլտուր-բարոյական կապիտալը անհրաժեշտ է որպես ֆիրմայի վարկանիշի, հետևաբար՝ վստահության և հաճախորդների քանակի աճի պայման: Բարոյականությունը և կուլտուրան նույնքան անհրաժեշտ են տնտեսության համար, որքան աշխատանքը, ինտելեկտը, որակավորումը:

Այսպիսով, ցանկացած մարդու կայնքում ձևավորվում են որոշակի ունակություններ, որոնք կարող են կապիտալային գնահատական ստանալ: Մարդկային կապիտալի ցանկացած տեսակը կարող է դրամական գնահատական ստանալ անհատական մարդկային կապիտալի վերարտադրության մեջ ներդրումների տեսքով: Ժամանակակից տնտեսության մեջ մարդու կենսամակարդակը և սոցիալական ստատուսը մեծապես կախված են կուտակված մարդկային կապիտալի մեծությունից և դրա ներդրման ձևի ընտրության արդյունավետությունից: Մարդկային կապիտալի որակը որոշիչ գործոն է նաև բնակչության կյանքի որակի ապահովման համար:

Poghosyan M. R.

Chairman of Department Economy and Management at the
Northern University of Armenia

ABOUT INTERPRITATIONS OF HUMAN CAPITAL

Key words: definitions of human capital, investments in human capital, human capital configuration

Capital historically defined economic relations regarding things, the attitudes about the bringing additional value. In practice business framework, human capital is the economic value of an employee's set of skills, with self reproducing capabilities. The literature review is performing, that the main accepted approach in economics views human capital as a set of skills/characteristics that increase a worker's productivity. Human capital refers to the stock of skills and knowledge embodied in the ability to perform labor so as produce economic value, formed as a result of investment and accumulated human's health, knowledge, skills, abilities, motivations which are expediently used during the process of labor, contributing to human's productivity and wage increase.

Погосян М. Р.

Заведующий кафедрой экономики и менеджмента Северного
университета Армении

ВОКРУГ ИНТЕРПРИТАЦИЙ ЧЕЛОВЕЧЕСКОГО КАПИТАЛА

Ключевые слова: определение человеческого капитала, внедрение
человеческий капитал, составляющие человеческого капитала

Историческое определение капитала было связано с экономическими отношениями, которые приносят добавочную стоимость. На предпринимательской практике человеческий капитал предусматривается как экономическая стоимость рабочей силы, выраженной в виде навыков, умений и способности самовоспроизводства. Литературный обзор показывает, что в основном человеческий капитал

представляется как совокупность навыков, нацеленных на повышение продуктивности рабочей силы. Таким образом, с целью создания материальных благ и повышения благосостояния общества человеческий капитал аккумулирует компоненты здравоохранения, специализированных навыков, мотиваций рабочей силы.

Փահլևանյան Ս.Վ

Հյուսիսային համալսարանի հայցորդ
Pahlevanyan@bk.ru


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Բանալի բառեր. Ֆինանսատնտեսական գործակիցներ, գործոնային վերլուծություն, ֆինանսական ցուցանիշների սահմանափակումներ

Առևտրային կազմակերպությունների գործարարության իրավիճակային գնահատման արդյունավետ միջոց է հանդիսանում ֆինանսատնտեսական նորմատիվներով Դյուպոնի համակարգի կառուցումը: Քանի որ ֆինանսատնտեսական նորմատիվները բնութագրում են գործարարության տարբեր ոլորտներ, ապա գործնականում խնդիր է հանդիսանում դրանց փոխկապակցման և պատճառահետևանքային կապերով ներկայացման համար:

Յուրաքանչյուր ֆինանսական գործակից իր առանձին գնահատմամբ չի կարող համալիր բնութագրել տնտեսավարման կոնկրետ ոլորտը, քանի որ դրա փոփոխման վրա ազդում են տարաբնույթ գործոններ, որոնց արդյունքները չափվում են փոխկապակցված այլ ֆինանսական գործակիցներով: Եվ ստացվում է այնպես, որ ֆինանսատնտեսական գործակիցները պատճառահետևանքային կապերով են փոխկապակցվում, որոնք ամփոփվում են Դյուպոնի համակարգում:⁴⁰

⁴⁰ Кондраков Н., Основы финансового анализа, М., Главбух, 2001, стр. 45



Ճնշմամբ 1. Դիտարկելի համակարգով ֆինանսական գործակիցների համակցման սխեման (հազ. դրամ)⁴¹

⁴¹ Կազմվել է հեղինակի կողմից:

Դյուպոնի համակարգի կառուցման հիմքում դրվում են առևտրային կազմակերպության ֆինանսական արդյունքերի և հաշվապահական հաշվեկշռի ամփոփ հոդվածները հաշվետու տարվա համար, որոնցով և հաշվարկվում են անհրաժեշտ ֆինանսատնտեսական նորմատիվները: Սակայն, հաշվարկների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ֆինանսական գործակիցները համակարգվում են, և մեկի փոփոխությունը անմիջապես իր ազդեցությունն է թողնում մյուսների վրա, դրանով բացահայտելով ցուցանիշների փոփոխման պատճառահետևանքային կապերը (տես գծապատկեր 1):

Փաստորեն, Դյուպոնի համակարգը հնարավորություն է ստեղծում.

1. համախմբելու և ամփոփելու առևտրային կազմակերպությունների գործարարության ֆինանսատնտեսական նորմատիվները,

2. ֆինանսատնտեսական նորմատիվային ցուցանիշները ներկայացնելու հնարավորինս փոխկապակցված՝ իրենց պատճառահետևանքային կապերով,

3. համալիր մոտեցմամբ գնահատելու կազմակերպությունների ֆինանսական իրավիճակը,

4. համակարգելու կազմակերպությունների ֆինանսական արդյունքների և հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը՝ ֆինանսական գործակիցների հաշվարկներ իրականացնելիս,

5. իրականացնելու ֆինանսատնտեսական գործակիցների փոփոխման գործոնային վերլուծություն:⁴²

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ֆինանսատնտեսական նորմատիվների համակարգումը Դյուպոնի մոտեցմամբ կատարվում է մի շարք քայլերով:

Առաջին քայլ. հաշվարկվում են համալիր գործակիցների հաշվարկման առաջին աստիճանի ելակետային ցուցանիշներ:

⁴² Ճուղուրյան Ա., Փահլեվանյան Ս., Ֆինանսական վերահսկողության հիմունքներ, «Էդիթ Պրինտ», Եր., 2014, էջ 57

Մասնավորապես, ֆինանսական արդյունքների հաշվետվության հիման վրա հաշվարկվել է իրացման հատույցը 7.5%, իսկ հաշվապահական հաշվեկշռի տեղեկատվությամբ հաշվարկվել են այնպիսի ելակետային ցուցանիշներ, ինչպիսիք են ակտիվների պտույտը՝ 0.85 անգամ, ընդհանուր պարտավորությունները:

Երկրորդ քայլ. առաջին աստիճանի ելակետային ցուցանիշների հիման վրա հաշվարկվում են համակարգի միջանկյալ ֆինանսատնտեսական ցուցանիշները: Այսպես, բաժնեհավաք կապիտալի և ընդհանուր կապիտալի հարաբերակցությամբ գնահատվում է ֆինանսական լծակի բազմարկիչը FLM (1.84 անգամ), իսկ ակտիվների պտույտի և իրացման հատույցի արտադրյալով՝ հաշվարկվում է կազմակերպության ընդհանուր ակտիվների հատույցը (ROA)՝ 6.4:

Երրորդ քայլ. միջանկյալ ֆինանսատնտեսական ցուցանիշների փոխկապակցումով հաշվարկվում և ներկայացվում է գործարարության արդյունավետության ամփոփ ցուցանիշը (ROE), այսինքն կապիտալի հատույցը՝ 11,8%, որը փաստորեն որոշվում է կազմակերպության ընդհանուր ակտիվների հատույցի (ROA) և ֆինանսական լծակի բազմարկիչի արտադրյալով (տես գծապատկեր 1):

Դյուպոնի համակագում ֆինանսատնտեսական նորմա-տիվային ցուցանիշները զարգացվում են՝ նրանցում լրացուցիչ տեղադրումներ կատարելու ճանապարհով, որով հիմքեր են ստեղծվում ցուցանիշների փոփոխման պատճառահետևանքային գործոնային վերլուծության համար: Այսպես, ROA ցուցանիշը, որը ներկայացվում է որպես.

$ROA = \text{իրացման հատույց} \times \text{ակտիվների պտույտ} = 7.5\% \times 0.85 = 6.4\%$
զարգացվում է, կատարելով հետևյալ տեղադրումները.

$$ROA = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{իրացում}} \times \frac{\text{իրացում}}{\text{ընդհանուր ակտիվներ}} = \frac{\text{զուտ շահույթ}}{\text{ընդհանուր ակտիվներ}}$$

Նման մոտեցմամբ կարելի է բաղդատել Դյուպոնի համակարգում ներկայցվող գործարարության արդյունավետության ամփոփ ցուցանիշը (ROE)

$$ROE = ROA \times FLM = 6.4\% \times 1.84 = 11.8\%$$

Դյուպոնի համակարգում ֆինանսատնտեսական նորմատիվների բուրգի գազաթում է գտնվում գործարարության արդյունավետությունը բնութագրող ROE ցուցանիշը, որը փաստորեն ամփոփում է ինչպես առևտրային կազմակերպությունների ֆինանսների օգտագործման, այնպես էլ ակտիվների տնօրինման հատույցի փոխազդեցությունները: Այսպես, մի կողմից կազմակերպությունը կարող է տնօրինել խոշորածավալ ակտիվների, սակայն դրանք չօգտագործել ինտենսիվորեն, իջեցնելով ակտիվների պտույտի արագությունը և այդ ուղղությամբ մրցակցային դիրքեր զիջել շուկայում: Մյուս կողմից, կարող է ճիշտ հակառակ իրավիճակը գրանցվել, երբ առևտրային կազմակերպությունը արդյունավետ օգտագործելով տնօրինած ակտիվները, չկարողանա ճիշտ կառավարել ստանձնած պարտավորությունները, և մեծացնելով ֆինանսական լծակը, սնանկացման և ինքնավարության ռիսկեր ձևավորել:

Հետևաբար, գործնականում Դյուպոնի սկզբունքով ֆինանսատնտեսական ցուցանիշների համակարգմամբ հստակ հակալիշիռներ են ստեղծվում ինչպես ֆինանսական, այնպես էլ արտադրական գործոնների միջև, դրանով՝ իսկ վերահսկողություն սահմանելով տնտեսավարման տարբեր ոլորտներում տեղ գտնող փոփոխությունների ներդաշնակեցման գործընթացների վրա: Այսպես, եթե ROE ցուցանիշը կտրուկ բարձրանում է արտադրական գործոնների հաշվին, ապա կառավարչական որոշումներ են կայացվում գործարարության ֆինանսավորման աղբյուրների բարելավման ուղղությամբ, և հակառակը:⁴³

Որպես կանոն, ֆինանսատնտեսական ցուցանիշներով իրականացվում է իրավիճակային վերլուծություն, բնութագրելով

⁴³ Ковалев В, Финасовый анализ: методы и процедуры, М., Финансы и статистика, 2001, стр. 24-25

Ժամանակի կոնկրետ պահին կազմակերպության ֆինանսական դրությունը և ախտորոշելու տնտեսավարման թույլ և ուժեղ կողմերը: Սակայն, տեսաբանների կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ ֆինանսատնտեսական նորմատիվներով հնարավոր է իրականացնել նաև գործոնային վերլուծություն, որը լրացնում է իրավիճակային վերլուծությանը և ընդլայնում է որակական եզրահանգումների շրջանակը:

Այս առումով, մեր կողմից առաջարկվում է ֆինանսատնտեսական նորմատիվային ցուցանիշներով իրավիճակային վերլուծությունը լրացնել գործոնային վերլուծությամբ, և ոչ միայն հետևելով Դյուպոնի համակարգին, այլև զարգացնելով այն: Մասնավորապես, նպատակահարմար ենք գտնում ֆինանսատնտեսական նորմատիվային ցուցանիշները խմբավորել միմյանց հակակշռման և պատճառահետևանքային կապերի փոխկապակցման սկզբունքով, որպեսզի որոշվի մի ցուցանիշի փոփոխության ազդեցության չափը, դրան փոխկապակցված մեկ այլ ֆինանսական ցուցանիշի վրա:

Pahlevanyan S.V

Post Graduating Study Participant at the Northern University

THE DEVELOPMENT WAYS OF FINANCIAL ANALYZING

Key words: financial economics ratios, case analyzing, limitations of financial indicators

Financial analyzing is coming essential in market economy framework and basically using financial ratios. However, financial ratios has a implementation limitations, concerning to variety of accounting policy, different approaches' of calculation, practice issues of compeered. In article is discussed ways of enlargement financial ratios, by using dynamic analyzing and connecting financial indicators in cause- results interaction system, which is promoting effective decition making process in financial management framework.

Пахлеванян С.В.

соискатель Северного университета

ПУТИ УЛУЧШЕНИЯ ФИНАНСОВОГО АНАЛИЗА

Ключевые слова: финансово-экономические коэффициенты, факторный анализ, ограничения финансовых показателей

В условиях рыночной экономики финансовый анализ становится актуальным и в основном применяет финансовые коэффициенты. Однако, финансовые коэффициенты в применении имеют свои ограничения, связанные с разнообразием бухгалтерской политики, с разными подходами в расчетах, практическими проблемами сопоставления. В статье, комментируются пути улучшения финансовых коэффициентов, с учетом применения динамического анализа и включения финансовых показателей в систему причинно – следственных взаимоотношений, что повышает эффективность управленческих решений в финансовом менеджменте.

Հակոբյան Ս. Գ.

Հյուսիսային համալսարանի հայցորդ
Էլ փոստ. seyranhakobyan@gmail.com

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բանալի բառեր. հանրային կառավարում, ֆինանսական վերահսկողություն, հանրային ֆինանսներ, տնտեսության հանրային հատվածի գործառնություններ

«Տնտեսության հանրային հատված» հասկացությունը իբրև գիտական կատեգորիա նոր է շրջանառվում և դրանով իսկ պայմանավորված, ունի տարբեր մեկնաբանություններ: Հաճախ հանրային հատվածը նույնացվում է պետական հատվածի հետ, դրանք դիտարկելով որպես հոմանիշներ: Նույն մոտեցումն է

ցուցաբերվում «հանրային կառավարում» և «պետական կառավարում» հասկացությունների հետ:

Գրականության մեջ նման երևույթը բացատրվում է Public արտահայտության բազմիմաստությամբ, քանի որ թարգմանվում է «հասարակական», «հանրային» և հաճախ՝ «պետական» արտահայտությամբ: Սակայն, պետական և հանրային կառավարման տարբերությունը սոսկ բառային չէ, այլ առավելապես իմաստային է: Առավել լայն տարածում ունի այն մոտեցումը, երբ հանրային կառավարումը ներկայացվում է որպես պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի սինթեզ: Սակայն, հանրային կառավարման կատեգորիան իր բովանդակությամբ ավելի տարողունակ է, քան պետական կառավարումը:

Վերջին տարիներին հանրային կառավարումն ուսումնասիրողների ուշադրությունը գրավել է հանրային քաղաքականության կամ քաղաքականության վերլուծության առավել ընդհանուր ոլորտը, որպես հասարակական արժեքներն արտահայտելիս հանրային կազմակերպությունների դերն ընկալելու մի ձև: Ըստ հանրային քաղաքականություն ուսումնասիրող փորձագետների, որոնք այս ուղին են բռնել՝ հանրային քաղաքականության գործընթացը կենտրոնական դեր է զբաղեցնում կառավարության գործողություններում:⁴⁴ Հանրային քաղաքականությունը դիտվում է որպես կառավարության գործունեության արդյունք, այս պատճառով էլ հանրային քաղաքականության ձևավորումը և իրագործումը կենտրոնական են համարվում քաղաքական գործընթացի համար: Եթե կառավարության աշխատանքը քաղաքականություն մշակելն է, ապա կառավարության ճիշտ ուսումնասիրությունը հանրային քաղաքականության ուսումնասիրությունն է:

Հանրային կազմակերպությունները որպես հանրային քաղաքականության գործընթացի մաս դիտելը նոր ուղիներ է բա-

⁴⁴ Adam, Berit: International Accounting for Public Administration: critical Analysis focusing on their Applicability, Frankfurt/Main, 2004, 68 p.

ցում հանրային կառավարման տեսությունների համար: Առաջինը՝ հնարավոր է, որ հանրային կազմակերպությունները համարվեն քաղաքական գործընթացի անբաժանելի մասը: Այսինքն՝ կառավարումը քաղաքականությունից անջատ դիտելու փոխարեն քաղաքականության հեռանկարը հաստատում է, որ հանրային կազմակերպությունների անդամները կարևոր դեր են խաղում հանրային քաղաքականության ձևավորման մեջ, որ նրանց ազդեցությունը խորապես զգացվում է տարբեր քաղաքականությունների և ծրագրերի նախագծման մեջ, և որ նրանք շարունակում են հանրային քաղաքականություն ձևավորել իրագործման իրենց ջանքերի միջոցով, նույնիսկ այն բանից հետո, երբ պաշտոնական քաղաքական գիծը արդեն հաստատվել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների կողմից: Նման տեսակետից դժվար է հիմնավորել քաղականություն-կառավարում երկընտրանքը: Երկրորդը, հանրային քաղաքականության կողմնորոշումը նվազագույն դեպքում խոսում է այն հնարավորության մասին, որ հանրային կառավարման ուսումնասիրությունը կարելի է ձևակերպել արժեքաքննադատական՝ և ոչ թե ամեն ինչ որպես գործիք դիտարկելու տեսակետից:

Հանրային կառավարումն ուսումնասիրողներն ու պրակտիկները փաստացի հիմքեր ունեն, զբաղվելու համար հանրային քաղաքականության ուսումնասիրությամբ:

Մակայն տեսական մտահոգություններ ևս գոյություն ունեն, որոնք ավելի հստակորեն արտահայտվում էին հանրային կառավարման մեջ ավելի քիչ ներգրավված քաղաքագետների կողմից: Հետևելով ընդհանուր առմամբ հասարակագիտության միտումներին՝ նրանք իրենց գործընկերներին քաղաքականության ուսումնասիրությունների այնպիսի տեսակետ էին կոչ անում, որն առավել կհարաբերվեր օրվա հարցերին:

Առավել ազատական մեկնաբանողները պնդում էին, թե քաղաքացիները նախկինում արհամարել էին այնպիսի հասարակական խնդիրներ, ինչպիսիք էին աղքատությունը, խոսքի ազատությունը և հետևաբար որոշակի պատասխանատվություն էին կրում այդ խնդիրների համար: Դեպի ավելի պահպանողական

մեկնաբանությանն հակված քաղաքագետները պնդում էին, թե վերլուծության մանրագնին և ռացիոնալ մեթոդները պետք է մոդել ապահովեին կառավարության մնացած մասի համար, ինչպես նաև «հումք»՝ քաղաքականության վերակառուցված գիտության համար: Երկու դեպքում էլ ավանդական քաղաքականությունը քննադատվում էր կառավարական հաստատություններով և կառավարության գործիչների վարքագծով չափից դուրս մտահոգված լինելու համար: Ինչպես պնդում էին նրանք, հանրային քաղաքականության բովանդակության և ներգործության մանրագնին վերլուծությունն էր, որ ուշադրության չէր արժանանում:⁴⁵

Հատկանշական է նաև այն, որ պետական ոլորտը և հանրային ոլորտը ոչ միայն տարբերվում են իշխանական մարմինների կազմով, այլ որ շատ էական է, դրանց ձևավորման սկզբունքներով ու հանրային կառավարման ժողովրդավարական էությամբ: Վեջինս դրսևորվում է բնակչության կողմից ուղղակի ընտրությամբ ձևավորված տեղական ինքնակառավարման մարմիններին պետական լիազորությունների մի մասի պատվիրակման, ընտրական իրավունքի լիակատար իրացման, կարևորագույն հիմնախնդիրները հանրաքվեների, համաժողովրդական քննարկումների միջոցով լուծելու եղանակների գործադրմամբ:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի մոտեցում, ըստ որի հանրային ոլորտի բաղադրիչները ներկայացվում են իբրև հանրային կառավարման հինգ տեսակներ՝ միջազգային հանրային կառավարում, հանրային պետական կառավարում, դաշնության սուբյեկտների կառավարում, ինքնավար միավորումների կառավարում, տեղական ինքնակառավարում: Այս տեսակետին կողմնակից չեն մի շարք հեղինակներ, ըստ որոնց միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵՄ և այլն) կառավարումը խառնվում է հանրային կառավարման առանձին բա-

⁴⁵ Акбаров Ж.Д. К вопросу о государственном финансовом контроле. //«Современная Россия. Информационно-аналитический портал». www.nasledie.ru/schetpal/

դադրիչներին՝ պետական, այդ թվում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներին:⁴⁶

Կորպորատիվ կառավորումը, որը բնորոշ է առևտրային կազմակերպություններին, նույնպես ուղղակի առնչություն չունի հանրային ոլորտի հետ: Կորպորատիվ փոխհարաբերությունները դրսևորվում են նրանում, որ վերջինիս արդյունքում գործարար կազմակերպությունների համար ստեղծվում է գործունեության միջավայր:

Հանրային ոլորտում առկա կառավարման գործառույթները բաժանվում են երկու խմբի՝ հիմնական և հատուկ: Հիմնական գործառույթները չորսն են. նպատակադրման, կազմակերպման, շահադրդման և վերահսկողության: Դրանք ընդհանուր են հանրային համակարգի բոլոր մարմինների համար (տես ստորև աղյուսակ):

Նպատակադրման գործառույթի իրականացման արդյունքում, սահմանվում է երկրի, առանձին տարածաշրջանների և ոլորտների սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունները: Կազմակերպման գործառույթի հիմնական բովանդակությունը երկրի տնտեսության և սոցիալական ոլորտի, տեղական ինքնակառավարման, ազգային անվտանգության համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքի ձևավորումն է, լիազորությունների պատվիրակումը կառավարման մարմիններին, օրենսդիր, գործադիր դատական մարմինների գործառույթների հստակ տարանջատումը և պատասխանատվության շրջանակների սահմանումը:

Շահադրդման գործառույթն ուղղված է հանրային ոլորտի աշխատողների աշխատանքի նյութական ու բարոյական փոխհատուցման արդյունավետ համակարգի ստեղծմանն ու գործադրմանը: Վերահսկողության գործառույթը միջոց է ապահովելու

⁴⁶ Афанасьев М.П., Кривоногов И.В. Модернизация государственных финансов, учебного пособия, М., Изд. дом ГУ-ВШЭ, 2007, 178 с.

ընտրված ռազմավարության իրագործումը, հանրային գույքի արդյունավետ օգտագործումը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ՀՆԱ-Ի ՆԿԱՏԱՄԱՐ⁴⁷

(%)

Հոդվածներ	2008	2009	2010	2011	2012
ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	2,9	3,6	4,1	4,1	4
պաշտպանություն	3,4	4,1	4,3	3,9	3,8
անվտանգություն և դատական գործունեություն	1,7	2,2	1,9	1,9	1,9
տնտեսական հարաբերություններ	2,5	4,3	3,2	2,2	1,8
շրջական միջավայրի պաշտպանություն	0,1	0,1	0,1	0,2	0,2
շինարարություն	0,4	0,7	1,2	1,2	0,4
առողջապահություն	1,4	1,8	1,6	1,7	1,6
հանգիստ, մշակույթ և կրոն	0,4	0,5	0,6	0,5	0,6
կրթություն	2,9	3,4	2,8	2,8	2,6
սոցիալական պաշտպանություն	6	7,8	7,1	6,8	7,3

Հանրային ոլորտի հատուկ գործառույթները վերաբերում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական կազմակերպությունների ոլորտային որոշակի գործունեությանը: Պետական կառավարման հատուկ գործառույթները բաժանվում են երկու խմբի՝ ներքին և արտաքին: Ներքին գործառույթներից են տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային դաստիարակության, բնապահպանական և այլն: Արտաքին գործառույթներից են՝ պաշտպանական, արտաքին տնտեսական համագործակցության ապահովման, համաշխարհային տնտեսությանն ինտեգրման, արտաքին ներդրումների ներգրավման և այլն:

⁴⁷ Աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2013, էջ 392

Հատուկ գործառույթներ ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքի ղեկավար, ավագանի), հասարակական-քաղաքական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները:

Այսպիսով, հանրային հատվածի զարգացման էվոլյուցիան ցույց է տալիս, որ այն պետական հատվածի զուտ ժառանգորդը չէ, այլ վերջինիս որակական փոխարկումը՝ ելնելով հասարակության սոցիալական, ժողովրդավարության զարգացման, ազգային անվտանգության շահերից: Հանրային հատվածը իր մեջ շաղախում է ոչ միայն պետական իշխանական կառույցները, այլև ժողովրդավարական ինստիտուտները, անհրաժեշտություն դարձնելով ներդաշնակություն մտցնելուն պետական և հասարակական կառույցների գործունեության միջև և, դրանով իսկ, արդիական դարձնելով հանրային ֆինանսների արդյունավետ օգտագործումը:

Hakobyan S.G.

Post Graduating program resurcher at the
Northern University of Armenia

FINANCIAL FUNCYIONS OF PUBLIC SECTOR ECONOMY

Key words: public management, financial control, public finance, functions of public sector of economy

At present, the financial control in the public sector is of a great importance , which takes a fundamentally new forms of quality properties. The expansion of the scope of self-monitoring function by reducing resources of external audit is becoming relevant, priority preventing and warning operations of budgeting deviations are considered, eventually rejecting the traditional "punitive" financial steps from the first plan from amongst. Hence, the data support of the formation of financial results in the public sector should not be limited only within the framework of the Financial Accounting, and whereby be forced to develop in the system of management accounting.

Акопян С. Г.
Соискатель Северного университета Армении

ФИНАНСОВЫЕ ФУНКЦИИ ПУБЛИЧНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

Ключевые слова: публичное управление, финансовый контроль, публичные финансы, функции публичного сектора экономики

В настоящее время большое значение приобретает финансовый контроль в общественном секторе, что приобретает принципиально новые формы качественные свойства. Становится актуальным расширения рамки функции самоконтроля за счет сокращения средств внешнего аудита, рассматриваются приоритетными предотвращающие и предупреждающие операции отклонений от бюджетирования, в итоге отвергая из первого плана традиционные “карательные” финансовые мероприятия из вне. Следовательно, информационное обеспечение формирования финансовых результатов в публичном секторе не должен ограничиваться только в рамках финансового учета, и тем самым принужден развивается именно в системе управленческого учета.

Ավետիսյան Մ.Ս.
Հյուսիսային համալսարանի ասիստենտ, տ.գ.թ.
Maskamar@rambler.ru

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Բանալի բառեր. միջազգային համադրումներ, գնողունակության համաթեքություն, գների համադրելի մակարդակ, ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքս

Միջազգային համադրումների ծրագրի (ՄՀԾ) արդյունքները կիրառվում են երկրների ընդհանուր տնտեսական զարգացումը և ազգերի բարեկեցությունը գնահատելու, ազգային տնտեսությունների արդյունավետությունը բացահայտելու և համեմատե-

լու, երկրների ֆինանսական հնարավորությունները վերլուծելու, զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին օգնության քաղաքականություն մշակելու և դրանց ծավալները որոշելու, շուկաների տարողունակությունը վերլուծելու, գների մակարդակները միջազգայնորեն համեմատելու, միջազգային տնտեսական ինտեգրումն ուսումնասիրելու և տնտեսական տեսություններ (զարգացման մոդելներ) մշակելու նպատակներով:

ՄՀԾ-ի արդյունքների վերջնական ցուցանիշների թվին են դասվում՝

- բնակչության թվաքանակը և համեմատվող երկրների տարածքը,

- երկրի բնակչության մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի (միասնական արժույթով) բացարձակ մակարդակը,

- երկրի մակարդակով և բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսները բազային երկրի համեմատ,

- ՀՆԱ-ի և դրա հիմնական բաղադրամասերի գնողունակության համարժեքությունները (ԳՀ),

- արժույթային փոխարժեքները և այլն:

Վերջին տասնամյակներում մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումները իրականացվում են գնողունակության համարժեքության որոշման հենքի վրա: *Գնողունակության համարժեքությունը* (ԳՀ) տվյալ երկրի արժույթի միավորների այն քանակն է, որն անհրաժեշտ է բազային երկրի արժույթի (կամ մի խումբ երկրների ընդհանուր արտարժույթի) մեկ միավորով ապրանքների և ծառայությունների համադրելի ստանդարտ հավաքածու ձեռք բերելու համար:

Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշն արտացոլում է երկրի տնտեսական զարգացման մակարդակը և հանդիսանում ՄՀԾ-ի հիմնական արդյունքներից մեկը: 2011թ. ՄՀԾ-ին մասնակցել է 194 երկիր: Ինչպես և սպասվում էր մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի առավելագույն արժեքները կրկին գրանցել են Լյուքսեմբուրգը՝ 88670 ԳՀ ԱՄՆ դոլար, Նորվեգիան՝ 61829, Շվեյցարիան՝ 51581, ԱՄՆ-ն՝ 49782, Նիդեռլանդները՝ 43150, Իռլան-

դիան՝ 42942, Ավստրիան՝ 42978, Ավստրալիան՝ 42000, Շվեդիան՝ 41761, Կանադան՝ 41069, Գերմանիան՝ 40990 և Բելգիան՝ 40093 դուլար: ԱՊՀ երկրների շարքում տվյալ ցուցանիշի բարձր արժեքով աչքի է ընկել Ռուսաստանը՝ 22502 դուլար, իսկ ցածր մակարդակով Տաջիկստանը՝ 2243 դուլար:

Աղյուսակ 1. ՀՀ ՀՆԱ-ի տարբեր չափումներ 1996-2011թթ. Համար

Ցուցանիշ	1996թ.	1999թ.	2002թ.	2005թ.	2008թ.	2011թ.
1. ՀՆԱ, մլրդ դրամ	661.2	987.4	1357.0	2242.9	3568.2	3777.9
2. ԱՄՆ դոլարի փոխարժեք, դրամ	413	535	573	458	306	372
3. ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար (1 : 2)	1601	1846	2368	4897	11661	10155
4. ԱՄՆ դոլարի ԳՀ, դրամ	105	165	177	179	156	187
5. ՀՆԱ, մլն ԳՀ ԱՄՆ դոլար (1 : 4)	6297	5984	7667	12530	22873	20202
6. Գների հարաբարեկան մակարդակ, % (4 : 2)	25	31	31	39	51	50
7. ՀՆԱ մեկ շնչի հաշվով ա) ԳՀ ԱՄՆ դոլար	1940	1580	2400	3903	7052	6696
բ) %-ով ԱՄՆ-ի նկատմամբ	7.0	4.7	6.6	9.4	15.0	13.4

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 1996-2011թթ. ՀՀ անվանական ՀՆԱ-ն (ազգային արժույթով) աճել է 5.7 անգամ, ԱՄՆ դոլարով արտահայտված՝ 6.3 անգամ, իսկ ԳՀ-ով՝ 3.2 անգամ: 2011թ. Հայաստանի ՀՆԱ-ն ԳՀ-ով կազմել է 20.2 մլրդ դոլար, որը 2008թ. մակարդակի համեմատ ցածր է 11.7%-ով, իսկ մեկ շնչի հաշվով՝ արդեն 5.0%-ով: Այդ տարբերությունը բացատրվում է նշված ժամանակահատվածում ՀՀ բնակչության թվաքանակի նվազումով, ինչպես նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ներգործությամբ:

ՀՀ ՀՆԱ-ի 2009թ-ի անվանական ծավալը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 426.5 մլրդ դրամով կամ 12.0%-ով, ինչը համադրելի գներով կազմում է 14.1%: Հետճգնաժամային երկու տարիներին (2010-2011թթ.) ՀՀ ՀՆԱ-ն ընթացիկ գներով աճել է 634.7

մյրդ դրամով կամ 20.2%-ով, որը ԳՀ ԱՄՆ դոլարով արտահայտված կազմում է ընդամենը 10.0%՝ դեռևս նկատելիորեն (մոտ 5 մյրդ-ով կամ 21.7%-ով) ետ մնալով 2008թ-ի մակարդակից:

ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով արժեքների ԱՄՆ-ի տվյալ մակարդակի նկատմամբ հարաբերակցությունը համադրումների ծրագրում անվանվում է ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքս, որը Հայաստանում 1996-2011թթ. աճել է 4.7%-ից մինչև 13.4%-ը: Վերջին համադրումների տվյալները վկայում են, որ ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսը աշխարհի գրեթե բոլոր երկրներում աստիճանաբար բարձրանում են, ընդ որում այն ավելի ակնառու է զարգացող երկրների դեպքում: Օրինակ, եթե զարգացած որոշ երկրներում ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսները 1996-2011թթ. բարձրացել են (Ավստրալիա, Գերմանիա, Կանադա, Մեծ Բրիտանիա, Նիդեռլանդներ, Շվեդիա, Ֆինլանդիա)՝ կազմելով 80-90%, իսկ որոշներում էլ դրանք նույնիսկ նվազել են կամ անփոփոխ մնացել (Բուլղարիա, Ճապոնիա, Ֆրանսիա), ապա զարգացող երկրներում այդ հարաբերակցությունները դիտարկվող ժամանակաշրջանում առնվազն աճել են կիսով չափ (Բելառուս, Թուրքիա, Լեհաստան, Հունգարիա, Մակեդոնիա):

Սակայն, զարգացող երկրների համար հույժ կարևոր է մյուս երկրների համեմատությամբ ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի բարձր աճի տեմպերի միջոցով կրճատել հետամնացությունն ԱՄՆ ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով մակարդակի նկատմամբ: Այդ առումով, հատկապես, աչքի են ընկնում մերձբալթյան հանրապետությունները և սոցճամբարի որոշ այլ երկրներ: Այսպես, 2011թ-ի ՄՀԾ արդյունքներով Էստոնիայի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ԳՀ արժեքը կազմում է ԱՄՆ-ի ցուցանիշի 46.3%-ը, Լիտվայինը՝ 45.2%, Հունգարիայինը՝ 45.0%, Ռուսաստանինը՝ 45.2%, Ղազախստանինը՝ 41.7%:

Գտնում ենք, որ Հայաստանի տնտեսական զարգացման միջնաժամկետ ծրագրերում որպես մակրոտնտեսական զարգացման հիմնական ուղենիշ (տեղեկատու ձևով) պետք է արձանագրել ՀՆԱ-ի ֆիզիկական ծավալի ինդեքսի նվաճում առնվազն 40%-ի սահմաններում, այսինքն ներկայիս մակարդակի եռա-

պատկում: Ըստ մեր հաշվարկների, դա իրականություն կդառնա, եթե ՀՀ ՀՆԱ-ի համադրելի գներով միջին տարեկան հավելաճի տեմպը կազմի 12.0%՝ հաշվի առնելով նաև ԱՄՆ համապատասխան ցուցանիշի 1.3%-ի չափով միջին տարեկան հավելաճը: ՀՆԱ-ի դեֆլյատորի միջին տարեկան հավելաճի պահպանումը 4%-ի շրջանակներում, թույլ կտա ենթադրելու, որ նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ի մեկ շնչի հաշվով ԳՀ մեծության եռապատկումը կիրականանա ընթացիկ գներով ՀՆԱ-ի ծավալի հավելաճի միջին տարեկան 16.0% տեմպի դեպքում:

Համադրումների հաջորդ կարևոր հաշվարկային ցուցանիշը գների համադրելի մակարդակն է, որը ցույց է տալիս ԳՀ-ի և արժույթի փոխարժեքի (ԱՓ) հարաբերակցությունը, ընդ որում երկուսն էլ արտահայտվում են 1 ԱՄՆ դոլարի հաշվով ազգային արժույթի միավորներով: ԳՀ-ի և ԱՓ-ի միջև տարբերությունը օգտագործվում է որպես այլ երկրների համեմատությամբ «ավելի է-ժան» կամ «ավելի թանկ» երկրներ բացահայտելու չափանիշ: Գների համադրելի մակարդակի ինդեքսները հաշվարկվում են նաև ըստ ՀՆԱ-ի օգտագործման յուրաքանչյուր բաղադրիչի:

Աշխարհի կտրվածքով բացահայտվել է մի օրինաչափություն, ըստ որի բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի առավել բարձր արժեքներին համապատասխանում են գների համադրելի մակարդակների առավել բարձր արժեքներ: Որքան այդ թվերը մոտենում են 100-ի, այդքան ԳՀ-ն մոտենում է տվյալ երկրի արժույթի պաշտոնական փոխարժեքին (ԱՓ-ին): Եթե ինդեքսի արժեքը գերազանցում է 100-ը, ապա երկիրը թանկ է բազային երկրի (սովորաբար ԱՄՆ-ի) նկատմամբ, և հակառակը, որքան փոքրանում են երկրների տվյալ ինդեքսի արժեքները, այդքան էժան են դրանք դառնում բազային երկրի համեմատությամբ:

